# ԳՈՐԾՆԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

# ՈՒՂԵՑՈՒՅՑ

*համայնքի կողմից առաջնորդվող հետազոտության համար*



INTERNATIONAL
ACCOUNTABILITYPROJECT

© Հեղինակային և պատճենման իրավունք 2018թ.,
Միջազգային հաշվետվողականության ծրագիր
www.accountabilityproject.org
Դիզայնը և էջադրումը՝ Լետիցիա Ֆարիզատոյի
Նկարազարդումը՝ Հարիս Իչվանի

# Բովանդակություն


**ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋՆՈՐԴՎՈՂ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՈՒԺԸ ..... 2**

**Ի՞ՆՉ Է ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ..... 5**

Ուշադրություն. Ապահովությունն ու անվտանգությունը համայնքի կողմից հետազոտություն իրականացնելիս ..... 8

Որոշեք ձեր հետազոտության թեման ..... 12

Խմբային աշխատանք: Ի՞նչ են թռչունները տեսնում իմ գյուղում ..... 13

Համայնքի կողմից առաջնորդվող հետազոտության փորձ. Մելայի պատմությունը ..... 18

**Ո՞Վ ՊԵՏՔ Է ՆԵՐԳՐԱՎՎԻ ՁԵՐ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ ..... 22**

Ովքե՞ր են ձեր հետազոտական թիմի անդամներ ..... 23

Ուշադրություն. Մշակեք անվտանգության պլան ..... 26

Ովքե՞ր են ձեր աջակիցները, հետազոտության հասցեատերերը և ազդեցություն գործողները ..... 27

Խմբային աշխատանք. Աջակիցներ գտնելը ..... 29

**ԻՆՉՊԵ՞Ս ՊԵՏՔ Է ԻՐԱԿԱՆԱՑՆԵՔ ՁԵՐ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ..... 34**

Հետազոտության գործիքակազմի մշակում ..... 35

Խմբային աշխատանք. Ճանաչե՛ք ձեր հարևաններին ..... 39

Համայնքի կողմից առաջնորդվող հետազոտության փորձ. Սուխգերելի պատմությունը ..... 42

Վերապատրաստեք ձեր թիմին ..... 46

Ուշադրություն. Հաղորդակցության ապահովությունն ու անվտանգությունը

Հավաքե՛ք ձեր տվյալները ..... 49

Հավաքե՛ք ձեր տվյալները ..... 50

Ուշադրություն. Անվտանգությունն ու ապահովությունը տվյալների հավաքման ընթացքում ..... 54

**ՍՏԱՑՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԸ ՀԱՍԿԱՆԱԼՆ ՈՒ ՏԱՐԱԾԵԼԸ ..... 55**

Համակարգեք ձեր ստացած տվյալները ..... 56

Խմբային աշխատանք. Ու՞մ է անհրաժեշտ համակարգիչ հաշվելու համար ..... 57

Ուշադրություն. Համայնքի ներգրավումը ողջ գործընթացում ..... 60

Վերլուծեք ձեր ստացած տվյալները ..... 61

Տարածեք ձեր ստացած տվյալները ..... 65

Խմբային աշխատանք. Ձեզ իրենց տեղը դրեք ..... 66

Միասին, գործե՛ք ..... 70

Համայնքի կողմից առաջնորդվող հետազոտության փորձ. Էլիասի պատմությունը ..... 71

**ԳՏԱԿԱՐ ՆՅՈՒԹԵՐԻ ՑԱՆԿ ..... 75**

ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ
ԱՌԱՋՆՈՐԴՎՈՂ

# ՀԵՏԱՋՈՏՈՒԹՅԱՆ ՈՒԺԸ



*«Ո՞րն է ապագայի մասին ձեր համայնքի տեսլականը: Ձեր համայնքն ուզու՞մ է ունենալ ինչ-որ բան, որը ներկայում գոյություն չունի»:*

Երբ մենք այս հարցերն ուղղեցինք սեմինարի մասնակիցներին Մյանմայի գյուղական համայնքում, մի մարդ պատասխանեց. «Մենք դա որոշելու իշխանություն չունենք»:

Հաճախ մենք զգում ենք, որ մեր համայնքների ապագայի մասին որոշումներ կայացնելու իշխանություն չունենք: **Բայց մենք չպետք է անօգնական զգանք:** Կան քայլեր, որոնք կարող ենք անել վերստին ստանձնելու վերահսկողությունը և սահմանելու մեր սեփական առաջնահերթությունները մեր համայնքների զարգացման համար: Համայնքի կողմից առաջ քաշվող գաղափարները և նրա փորձը կարող են հանգեցնել այնպիսի զարգացման, որը հարգում է մարդկանց և պաշտպանում շրջակա միջավայրը:

Համայնքի կողմից առաջնորդվող հետազոտության իրականացումն արդյունավետ տարբերակ է համայնքների համար արձագանքելու զարգացման մարտահրավերներին և բարձրաձայնելու իրենց զարգացման առաջնահերթությունները:

**Համայնքի կողմից առաջնորդվող հետազոտությունը** մի գործընթաց է, որի միջոցով համայնքը, հիմնվելով իր սեփական գիտելիքների վրա, սահմանում է որևէ խնդիր, խորը մտածում դրա մասին և լուծում առաջարկում:

Համայնքները կարող են իրականացնել իրենց սեփական հետազոտությունը աջակիցների, օրինակ՝ ՀԿ-ների, ակադեմիական ոլորտի աշխատողների կամ կառավարության աջակցությամբ կամ առանց դրա: Թեև այս աջակիցները կարող են նպաստել գործընթացին, խորհուրդներ տալ կամ օգնել վերլուծել ստացված արդյունքները, **համայնքն է, որը ղեկավարում է հետազոտությունը** և որոշումներ է կայացնում: Համայնքի կողմից առաջնորդվող հետազոտությունը համայնքների ուզած զարգացման մոդելի առանցքն է, գործընթաց, որտեղ ամեն մեկն ունի որոշումների կայացման իրավունք և յուրաքանչյուրի ձայնը լսելի է:

Իրականում, երբ համայնքի անդամներն իրենց սեփական հետազոտությունն են իրականացնում, նրանք կարող են այնպիսի տվյալներ բացահայտել, որոնք դրսի մարդիկ ի վիճակի չեն: Համայնքներն այնպիսի գիտելիքների են տիրապետում իրենց շրջակա միջավայրի մասին, որոնք որոշումներ կայացնողները և պլանավորողները կարող է և չիմանան: Հաճախ, հետազոտության գործընթացն ինքը համայնքներին օգնում է ավելի լավ հասկանալ իրենց խնդիրները, վստահություն ձեռք բերել իրենց գիտելիքների և գաղափարների հանդեպ, ամրապնդել համերաշխությունը և հաշվետվողականությունը համայնքի անդամների միջև և անհրաժեշտ հմտություններ ձեռք բերել համայնքի կազմակերպման համար:

Հետազոտության գործընթացից քաղված հմտություններն ու տվյալները միասին կարող են օգտակար լինել համայնքի կողմից նախաձեռնվող միջոցառումներ կազմակերպելու համար:

Համայնքի կողմից իրականացված հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ **այլընտրանքներ հնարավոր են**, և որ ամբողջ զարգացման գործընթացը կարող է այնպես վերափոխվել, որ համայնքները վերականգնեն իրենց իշխանությունը: Երբ համայնքներն իրենց ու իրենց նպատակները դիտարկում են որպես զարգացման գործընթացի առանցք, համայնքի կողմից առաջնորդվող հետազոտությունը կարող է հզոր գործիք դառնալ:

Այս Ուղեցույցում դուք կգտնեք խմբային աշխատանքի վարժություններ, ինչպես նաև գործիքակազմ համայնքի կողմից առաջնորդվող հետազոտություն պլանավորելու և իրագործելու համար: Դուք նաև խորհուրդներ և ռազմավարություններ կքաղեք համայնքի կազմակերպիչների պատմություններից, ովքեր նման հետազոտություններ են իրականացրել ողջ աշխարհում: Այս գրքույկի մեջ դուք կգտնեք Համայնքի կողմից առաջնորդվող հետազոտության ստուգացանկ, որը կարող եք կիրառել որպես այս Ուղեցույցում ներառված տարբեր դասերի հիշեցում: Կգտնեք նաև Համայնքի կողմից առաջնորդվող հետազոտության հարցաշարի ձևանմուշ, որը կարելի է ադապտացնել և կիրառել ձեր համայնքի համար:









Եկե՛ք սկսենք

# Ի՞ՆՉ Է ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ


**Ուշադրություն.** Ապահովությունն ու անվտանգությունը համայնքի կողմից հետազոտություն իրականացնելիս **8**


Որոշեք ձեր հետազոտության թեման **12**

**Խմբային աշխատանք:** Ի՞նչ են թռչունները տեսնում իմ գյուղում **13**

Համայնքի կողմից առաջնորդվող հետազոտության փորձ. Մելայի պատմությունը **18**

Ի՞նչ եք մտածում, երբ լսում եք «հետազոտություն» բառը: Կարծում եք, թե հետազոտությունն ինչ-որ հեռավոր բան է, որն անում են ուրիշնե՞րը: Արդյո՞ք այն անհասանելի ինչ-որ բան է, որն անում են միայն համալսարանի պրոֆեսորները:



Պարտադիր չէ, որ հետազոտությունը սրանց նման մի բան լինի: Մենք կարծում ենք, որ այն պետք է **համատեղ աշխատանք** լինի, գործընթաց, որում համայնքները իշխանություն ունեն որոշել, ղեկավարել և իրականացնել հետազոտություն իրենց ընտրած թեմայի շուրջ և որտեղ ամեն մասնակից ազատ է նպաստել, փոխանակել և վերարտադրել կուտակված գիտելիքը:




Մեկոնգի համայնքային ինստիտուտը սահմանում է համայնքի կողմից առաջնորդվող հետազոտությունը որպես *«գիտելիքի փնտրտուք՝ հիմնված տեղական փորձի վրա, համայնքի անդամների կողմից և համայնքի բարօրության համար»*: Այլ տեսակի հետազոտությունները սովորաբար սկսում են համայնքի անդամ չհանդիսացող անձանց կողմից ձևակերպված հարցերով: Համայնքի կողմից առաջնորդվող հետազոտության դեպքում համայնքի անդամներն են որոշում իրենց թեմաները, հարցերն ու գործընթացը, ինչը նրանց թույլ է տալիս ստեղծել, վերլուծել և նկարագրել սեփական փորձառությունները: Այս տեսակի հետազոտության դեպքում **համայնքը հիմնվում է իր սեփական գիտելիքի**, սովորույթների և ավանդույթների վրա և հանդիսանում է հետազոտության արդյունքում ձեռք բերված տվյալների տերը: Համայնքներն այլևս չպետք է լինեն պարզապես հետազոտության վայր կամ առարկա: Ոչ միայն հետազոտողներն ու ակադեմիական ոլորտի աշխատողները, այլ համայնքի անդամներն էլ են փորձագետներ:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ.

## ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼԻՍ

Համայնքի կողմից առաջնորդվող հետազոտությունը կարող է հզոր և արդյունավետ գործընթաց լինել, սակայն կան նաև ռիսկեր, որոնք պետք է հաշվի առնել:



Երբեմն մարդիկ սպառնալիքներ են ստանում կամ նրանց վնաս են պատճառում որևէ զարգացման ծրագրի, ընկերության կամ իրենց կառավարության մասին քննարկումներ ծավալելիս կամ հավելյալ տեղեկություններ հայցելիս: Այս սպառնալիքներն ու վնասը կարող են գալ տարբեր տեսակի մարդկանցից, ներառյալ իշխանություններից, ընկերություններից, իշխանություն ունեցող խմբերից կամ հենց նույն համայնքի որոշ հատվածներից: Ահա օրինակներ որոշ վտանգների մասին, որոնց մարդու իրավունքների պաշտպաններն առնչվում են ողջ աշխարհում: Ցավոք, սրանք կարող են պատահել ցանկացածի հետ, ով աշխատում է զգայուն ծրագրերում.

- Հակապետական», «հակակրոնական», «արևմտյան ուժերի գործակալներ», «զինված ընդդիմադիր խմբերի անդամներ», «մարմնավաճառներ», «մարդկային առևտրով զբաղվողներ», «կոռումպացված» լինելու մասին մեղադրանքներ,
- Միջամտություն ճամփորդություններին, այլ անձանց գրելու կամ նրանց հետ կապվելու հարցերում,

- Սպառնալիքներ («եթե չդադարեցնես քո գործունեությունը, տղադ կձերբակալվի»)
- Բարդացված վարչական խոչընդոտներ. պահանջներ տրամադրելու մանրամասն ֆինանսական տեղեկություններ կամ դժվարություններ կազմակերպություններ գրանցելիս կամ վերագրանցելիս,
- Ֆիզիկական և սեռական ոտնձգություններ,
- Հարձակումներ ապրուստի միջոցների վրա. աշխատանքից կամ կրթական հնարավորություններից զրկում,
- Հարձակումներ սեփականության վրա. վանդալիզմ կամ մեքենայի, տան կամ գրասենյակի ավիրում,
- Կալանավորում, ձերբակալում կամ բանտարկում, ամենայն հավանականությամբ կեղծ մեղադրանքների, քաղաքացիական կամ քրեական գործերի կամ զրպարտության հիմքով,
- Դաժան վերաբերմունք և խոշտանգում,
- Առևանգում կամ սպանություն:



***Այս ցուցակը հիմնված է Frontline Defenders կազմակերպության անվտանգության վերաբերյալ աշխատանքային գրքույկի վրա: Հավելյալ տեղեկությունների և վարժանքների համար (ներառյալ ռիսկի և սպառնալիքի վերլուծության) տե՛ս*

*http://bit.ly/HRDWorkbook*

Ելնելով այս ռիսկերից՝ ամեն ոք, ով ուզում է ներգրավվել համայնքի կողմից առաջնորդվող հետազոտությանը պետք է կարողանա իրազեկված որոշումներ կայացնել առ այն, թե ուզում է մասնակցել և ինչպես: Կարդացեք Համայնքի կողմից առաջնորդվող հետազոտության ստուգացանկը, որը ներառված է Օգտակար նյութերի ցանկում, որպեսզի հասկանաք, թե ինչպիսին կարող է լինել հետազոտության ընդհանուր գործընթացը ձեր համայնքի համար: Մտածեք ձեր համայնքում ներկայումս տիրող իրավիճակի մասին և գնահատեք գործընթացի ամեն քայլում լուրջ վնասներ կրելու հավանականությունը, եթե սկսեք հետազոտությունը:

Եթե ռիսկերը մեծ են, և հետազոտությանը մասնակցելը կարող է մարդկանց մեծ վտանգի ենթարկել, միգուցե արժե մտածել այլընտրանքային մեթոդների մասին: Անվտանգության իրավիճակները կարող են արագորեն փոխվել, այնպես որ միգուցե կարիք լինի շարունակաբար գնահատել իրավիճակը հետազոտության ողջ ընթացքում:

Ձեր անվտանգության իրավիճակը գնահատելը վախենալու կարող է թվալ, սակայն ձևեր կան ռիսկերը նվազագույնի հասցնելու: Օրինակ՝ համայնքի անդամների հետ անկանոն հանդիպումներ անցկացնելը կարող է իշխանությունների անհարկի ուշադրությունը գրավել: Հանդիպումներ անցկացնելիս հաշվի առեք հետևյալ տարբերակները.

- Սկսեք 5 կամ ավելի քիչ մարդկանցով տեղական ռեստորանում կամ սրճարանում փոքր հանդիպում կազմակերպելուց,
- Հանդիպումներ կազմակերպեք պիկնիկի կամ այլ միջոցառման ժամանակ, որոնք մարդիկ անց են կացնում սիրված տուրիստական վայրերում, օրինակ՝ այգում, մոտակա ջրվեժի կամ լճի մոտ,

- Հարմարեցրեք կրոնական կամ ոչ-կրոնական ավանդական արարողություններն այնպես, որ համայնքի անդամների համար հնարավորություն ընձեռվի հանդիպել և քննարկել զգայուն թեմաներ առանց կասկածներ հարուցելու:




Ուղեցույցում զետեղված «Ուշադրության» բաժիններում դուք ավելի շատ առաջարկներ կգտնեք ռիսկերը նվազեցնելու մասին:

# ՈՐՈՇԵՔ ՁԵՐ ՀԵՏԱՋՈՏՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ

Համայնքի կողմից առաջնորդվող ցանկացած հետազոտության առաջին քայլը հետազոտության թեման համայնքի հետ միասին որոշելն է: Որպեսզի հնարավորինս շատ մարդկանց ներգրավեք, կազմակերպեք հանդիպում կամ մի քանի խմբային զրույցներ՝ համայնքի հետաքրքրությունը շարժելու համար: Ներկայացրեք նրանց, թե ինչ է համայնքի կողմից առաջնորդվող հետազոտությունը և բացատրեք, որ **համայնքի գործն է որոշել,** թե ինչ հետազոտել, ինչպես մոտենալ հարցին և ինչ անել ստացված տվյալների հետ:

Երբ արդեն ներկայացրել եք գործընթացը, փորձեք սահմանել հետազոտման համար ամենակարևոր խնդիրները ՝ ելնելով ձեր համայնքից հնչած մեկնաբանություններից և երկխոսությունից: Ներառեք կանանց, երիտասարդների, հաշմանդամություն ունեցող մարդկանց և համայնքի այլ անդամների, ովքեր, հնարավոր է, թերներկայացված են կամ դուրս են մնացել նմանատիպ քննարկումներից: Կարող է կարիք լինի հատուկ միջոցներ ձեռնարկել՝ **ապահովելու յուրաքանչյուրի մասնակցությունը** քննարկմանը, ինչպես օրինակ առանձին «միայն կանայք» կամ «միայն երիտասարդներ» հանդիպումներ նախաձեռնելը:



ԽՄԲԱՅԻՆ
ԱՇԽԱՏԱՆՔ.

# Ի՞ՆՉ ԵՆ ԹՌՉՈՒՆՆԵՐԸ ՏԵՍՆՈՒՄ ԻՄ ԳՅՈՒՂՈՒՄ

**Նպատակը.**

Վեր հանել այն խնդիրները, որոնք ձեր համայնքի կարծիքով կարևոր են ուսումնասիրության համար և մշակել համայնքի կողմից առաջնորդվող զարգացման առաջնահերթությունները:

**Անհրաժեշտ ժամանակ** 1 -2 ժամ

**Անհրաժեշտ նյութերը.**

Ֆլիփ չարթի թուղթ, ինքնակպչուն կամ գունավոր թղթեր, կպչուն ժապավեն, գրիչներ, մարկերներ կամ այլ գրելու պարագաներ




## ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

### ՄԱՍ I. ԻՄ ՀԱՄԱՅՆՔԸ ԹՌՉՆԻ ԱՉՔՈՎ

1. Հավաքեք համայնքի մարդկանց  մի ընդհանուր վայրում, ուր բոլորը կարող են գալ և մասնակցել:

2. Բացատրեք, որ վարժության նպատակն է բացահայտել ամենակարևոր խնդիրները, որոնց համայնքն առերեսվում է և որոնց մասին ավելին կուզեր իմանալ:

3. Խնդրեք մասնակիցներին պատկերացնել, որ իրենք երկնքում ճախրող թռչուններ են, և իրենց թռչնի աչքով կարող են տեսնել համայնքի եզրագծերը, ձևը և հիմնական առանձնահատկությունները: Գետնին կամ ֆլիպ չարթի թղթի վրա խնդրեք մասնակիցներին տեղորոշել և նշել երկրագնդի 4 կողմերը (հյուսիս, հարավ, արևելք և արևմուտք) կամ համայնքի հիմնական կողմնորոշիչները, օրինակ՝ մեծ ծառ, սար կամ համայնքի կենտրոնը: Սովորաբար ավելի հեշտ է սկզբում գծել այս քարտեզը՝ կիրառելով ձեռքի տակ առկա նյութերը, այնուհետև արտատպել այլ թղթի վրա:



4. Ելնելով կամ երկրագնդի կողմերից կամ համայնքի հիմնական կողմնորոշիչներից՝ գծեք համայնքի սահմանները: Գծեք ճանապարհները կամ որևէ գետեր կամ առուներ, որոնք հոսում են գյուղի միջով:

   *(3-րդ և 4-րդ քայլերը պետք է տևեն մոտ 10-15 րոպե: Հիշեցրեք մասնակիցներին, որ ոչ շատ հմուտ նկարելն էլ բավական է և գեղեցիկ քարտեզի կարիք չկա):*

5. Խնդրեք մասնակիցներին նշել այլ կարևոր համայնքային ենթակառուցվածքներ, որոնցից են դպրոցը, խմելու ջրի աղբյուրները, հիվանդանոցները, կրոնական վայրերը, կամուրջները կամ ապաստանները:

6. Հարցրեք մասնակիցներին՝ արդյո՞ք գյուղում կամ մոտակայքում կան տարբեր էթնիկ և կրոնական խմբեր: Կա՞ն այլ խմբեր: Այս վայրերն ուղղակի նշեք քարտեզի վրա: Կամ գրեք այս վայրերը թղթի կտորի կամ կպչուն թղթիկների վրա և փակցրեք քարտեզի վրա:


## ՄԱՍ II. ՄԵՐ ՀԵՏԱՋՈՏՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ ՈՐՈՇԵԼԸ

7. Հիմա, երբ արդեն ունեք համայնքի՝ թռչնի աչքի տեսարանը, բաժանվեք 5 հոգանոց փոքր խմբերի: Ամեն խմբի մասնակիցներին խնդրեք քննարկել և վեր հանել, թե արդյոք որևէ խնդիրների կամ մարտահրավերների են առնչվում, օրինակ՝ հողի հասանելիության կորուստ, ջրի սակավություն, ընտանեկան բռնություն կամ դպրոցների բացակայություն: Կախված նրանից, թե արդյոք դուք հետաքրքրված եք անդրադառնալ արդեն գոյություն ունեցող զարգացման ծրագրին, թե ուզում եք ձեր սեփականը սկսել, տվեք այսպիսի հարցեր .

   a. *Ի՞նչ է ձեզ մտահոգում մեր համայնքի հետ կապված,*
   b. *Որո՞նք են այն խնդիրները, որ լուծման դեպքում կօգնեն բարելավել համայնքի կյանքը,*
   c. *Ի՞նչ մարտահրավերներ կարող ենք հաղթահարել, որոնք մեր համայնքի մարդկանց տարբեր խմբերի կօգնեն ավելի երջանիկ և առողջ դարձնել:*

8. Փոքր խմբերում քննարկելուց հետո խնդրեք մասնակիցներին իրենց գաղափարների պատկերը նկարել, կամ գրել իրենց գաղափարները թղթի կտորի կամ կպչուն թղթիկների վրա: Փակցրեք դրանք քարտեզի վրա:

9. Մասնակիցներին խնդրեք ընտրել 1 -3 ընդհանուր կարևոր խնդիրներ: Խնդրեք նրանց մտածել, թե ինչ իրավիճակ կա այս խնդիրների արդյունքում և ինչ տեղի կունենա, եթե այս խնդիրները լուծվեն: Թող նրանք ներկայացնեն իրենց գաղափարները ողջ խմբին:



Թող ինչ-որ մեկն այս կետերը գրի թղթի վրա և փակցնի քարտեզի կողքին: Այնուհետև ամեն սահմանված խնդրի վերաբերյալ հարցրեք.

a. ***Ո՞րն է այս խնդրի ազդեցությունը մեր համայնքի վրա:***

Ազդեցությունը հաճախ այն է, ինչ մարդիկ տեսնում են, լսում և զգում որպես խնդրի հետևանք:

b. ***Որո՞նք են այս խնդրի ուղղակի պատճառները:***

Պատճառները հաճախ նրանք են, ինչը չեք կարող տեսնել կամ դրանք թաքնված են և նպաստում են խնդրի գոյությանը: Այլ կերպ ասած՝ ո՞ր իրավիճակներն են ուղղակիորեն նպաստում խնդրին:

c. ***Ո՞րն է այն գլխավոր պատճառը, որը մենք պետք է վերացնենք:***

Գլխավոր պատճառներն այն արմատական պատճառներն են, որոնք ուղղակիորեն առաջացնում են տվյալ խնդիրը: Դուք կարող եք որևէ իրավիճակի համար սահմանել ավելի, քան մեկ գլխավոր պատճառ. ո՞րն է ամենակարևորը, որը ձեր համայնքը պիտի լուծի՝ խնդիրը վերացնելու համար:

d. ***Ի՞նչ տեղեկության կարիք ունենք այս խնդիրը լուծելու համար:***

Ահա համայնքում սննդի պակասի խնդրի օրինակ.

### Ազդեցությունը

- Մեր համայնքի երեխաները թերսնուցված են
- Մեր համայնքի անդամների եկամուտը նվազել է

### Ուղղակի պատճառը

- Գետից ավելի քիչ ձուկ է բռնվում

### Արմատական պատճառները

- Հարևան համայնքը գալիս է մեր տարածք՝ ձուկ որսալու
- Հարևան համայնքի մոտ ջրամբար է կառուց
- Ջրամբարի ազդեցությունը մեր համայնքի վրա չի հաշվարկվել, երբ առաջարկվում էր այն կառուցել:

**10** Առանձին ֆլիփ չարթի թղթի վրա գրեք ձեր հիմնական խնդիրները և վերևում տրված հարցերի պատասխանները: Քննարկեք, թե որ կետերը կուզենաք ուսումնասիրել ձեր համայնքի կողմից առաջնորդվող հետազոտության ընթացքում: Նեղացրեք թեման՝ առանձնացնելով խնդրի տարբեր մասերը, ազդեցությունը և արմատական պատճառները, որոնք ուզում եք վերացնել:

*** Այս վարժությունն առապտացվել է MobLab-ի Արշավների արագացման գործիքակազմում գտնվող «Խնդրի հետազոտում» վարժությունից և Action Aid-ի Յանցային գործիքակազմի «սոցիալական քարտեզից»: Դրանք կարող եք գտնել այստեղ.*

*https://bit.ly/SocialMap_ReflectionAction*
*http://bit.ly/MobLabCampaignAcceleratorDefine*

Հիշե՛ք. թեման, որը դուք կընտրեք, կարող է տարբեր զարգացման բանկերի, ծրագիր մշակողների կամ կառավարության կողմից այլ տեսանկյունից դիտարկվել: Նրանց պնդումներին կարելի է հակափաստարկներ բերել և դրանք հարցականի տակ դնել, եթե դրանք սխալ կամ թերի են: Օրինակ՝ եթե դուք հետազոտում եք որևէ ծրագրի՝ մարդու և շրջակա միջավայրի վրա առկա և հնարավոր ազդեցությունը, դուք կարող եք զարգացման բանկերի, ծրագիր մշակողների կամ կառավարության կողմից ստեղծած «ծրագրի պաշտոնական փաստաթղթերից» պակասող, դուրս թողնված կամ սխալ տեղեկությունների փոխարեն ձեր հետազոտությունից տվյալներ տրամադրել:

## ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋՆՈՐԴՎՈՂ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ.

# ՄԵԼԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ



Բարև ձեզ, իմ անունը Մելա է: Ես համայնքի կազմակերպիչ եմ Զիմբաբվեից: Վերջին ութ տարում ես ողջ Աֆրիկայում աշխատել եմ համայնքների հետ՝ նպաստելու թափանցիկությանը հանքարդյունաբերությունում: Ես վերապատրաստում և աջակցում եմ համայնքներին՝ իրականացնելու իրենց սեփական հետազոտությունը և սահմանելու զարգացման մարտահրավերները, որոնց նրանք առնչվում են: Կարծում եմ՝ համայնքի կողմից առաջնորդվող հետազոտությունը հզոր գործիք է, որը թույլ է տալիս համայնքներին պատմել իրենց պատմությունները և իրականացնել այն փոփոխությունները, որոնք իրենք կուզեն տեսնել:

Սկզբում ես համայնքի կողմից առաջնորդվող հետազոտությունը նախաձեռնեցի Մարանգեում՝ Արևելյան Զիմբաբվեում գտնվող իմ համայնքում: 2006թ. ադամանդի շերտեր հայտնաբերվեցին Մարանգեում, ինչը հանգեցրեց հանքարդյունաբերության սրընթաց աճի, որն առաջացրեց մարդու իրավունքների բազմաթիվ խախտումներ: Համայնքի կողմից առաջնորդվող հետազոտության միջոցով մենք փորձեցինք համատեղ հասկանալ մեր խնդիրների արմատները: Այս գործընթացի ամենակարևոր քայլերից մեկը հետազոտության թեման սահմանելն ու դրա շուրջ համաձայնության գալն էր: Մարանգեում մենք քննարկեցինք, թե ինչպես էին հանքերը շահագործող ընկերությունները

Մելանիա Չիպոնդան Զիմբաբվեի Մարանգե համայնքից է և հանդիսանում է WoMin-ի տարածքային քարոզարշավների համակարգող: WoMin-ը Աֆրիկյան գենդերային և օգտակար հանածոներին առնչվող ալյանս է, որի նպատակն է առաջ մղել Աֆրիկյան հետ-հանքարդյունաբերական, էկոլոգիապես արդար, իրենց առանցքում կանանց կարևորող այլընտրանք՝ ի տարբերություն զարգացման գերիշխող քայքայիչ մոդելների: Նախկինում Մելան Չիաձվա համայնքային ֆոնդի հիմնադիրն ու ծրագրերի համակարգողն էր:

Մելան ՄՀԾ-ի (IAP) Զատագովության գլոբալ թիմի անդամ է, նախաձեռնություն, որի նպատակն է միավորել զարգացման ծրագրերի հետ առնչվելու անմիջական փորձ ունեցող համայնքային կազմակերպիչներին վարելու համայնքի կողմից իրականացվող

մեզ զրկել մեր հողից, ռեսուրսներից և ապրուստի միջոցներից: Երբ քննարկում էինք, հասկացանք, որ եթե կարողանանք թույլ չտալ մասնավոր ընկերություններին բռնի կերպով վերցնել մեր հողը, մենք նաև կկարողանանք պաշտպանել մեր ռեսուրսները և ապրուստի միջոցները: Մենք հողի զավթումը սահմանեցինք որպես մեր խնդիրների արմատական պատճառ:

Երբեմն կարող է այդքան էլ հեշտ չլինել միանգամից սահմանել հիմնական խնդիրը: Պետք է ճկուն լինեք և վերագնահատեք հետազոտության խնդիրը՝ ելնելով նրանից, թե մարդիկ ինչպես են պատասխանում հարցերին: Օրինակ՝ մեկ այլ համայնքում մենք սկզբում կարծում էինք, որ հիմնական խնդիրը հողի զավթումն է, սակայն հետազոտության ընթացքում տեսանք, որ բոլորը խոսում էին ջրի հասանելիության կորստի մասին: Այդ ժամանակ մենք հասկացանք, որ սա է հիմնական խնդիրը, որը համայնքն ուզում է լուծել, և դա ներառեցինք մեր հետազոտության հաշվետվության մեջ:

Մարանգեում մեր հետազոտական թիմը բաղկացած էր յոթ տեղացի երիտասարդից, սակայն այլ վայրերում համայնքի առաջնորդները և կազմակերպիչները միավորվեցին հետազոտությունը ղեկավարելու համար: Մենք փոքր խմբերում մարդկանց հարցեր տվեցինք և խրախուսեցինք կանանց խոսել: Եթե կանայք ներկա չէին կամ լուռ էին, մենք կազմակերպում էինք երկրորդ քննարկումը միայն կանանց ներկայությամբ: Քննարկման սկզբում բացատրում էինք հետազոտության հիմքերը և մասնակիցներին ասում էինք, որ նրանք չմասնակցելու իրավունք ունեն, եթե անհարմար կամ անապահով են զգում: Մարանգեում ֆոկուս խմբային քննարկումներից որոշների ժամանակ տարածքում գտնվող ռազմաբազայի

հետազոտություն և մոբիլիզացնելու իրենց համայնքներին՝ փոխելու զարգացման ընկալումն ու ձևը: Հավելյալ տեղեկություններ կգտնեք այստեղ. *bit.ly/IAP_GAT*

Մելայի հետազոտության մեջ կիրառված հարցաշարը Ջատագովության գլոբալ թիմի կողմից մշակած Հարցաշարի ձևանմուշն է, որը ներառված է Օգտակար նյութերի ցանկում:



Ջիմբաբվե

> Երբեմն կարող է այդքան էլ հեշտ չլինել միանգամից սահմանել հիմնական խնդիրը:

> Այսօր, Մարանգեում մարդիկ այնպես են անում, որ իրենց ձայնը լսելի լինի:

զինված զինվորները գալիս էին ժողովներին ու լսում քննարկումները: Համայնքի անդամները թույլ չտվեցին իրենց վախեցնել: Ինչպես մի մասնակից ասաց, *«քանի դեռ ճշմարտություն ենք ասում, մենք չենք պատրաստվում թուլացնել մեր պայքարը մեր հողերի և ապրուստի միջոցների համար»:*



Մեր կիրառած *Հարցաշարի ձևանմուշը* ճկուն էր և հնարավորություն էր տալիս համայնքի անդամներին պատմել իրենց պատմությունները, նույնիսկ եթե սպեցիֆիկ հարցեր չէին տրվում հարցաթերթում: Փոքր խմբերով քննարկումներից հարուստ տվյալներ ստացանք, որոնք մենք վերլուծեցինք հարցաթերթիկում տրված պատասխանների հետ միասին: Մենք նաև դեմ-առ-դեմ հարցազրույցներ անցկացրեցինք այն մարդկանցից յուրաքանչյուրի հետ, ովքեր հարմար չէին զգում ուսումնասիրությանը խմբով մասնակցել: Իրապես էական էր համայնքի ամեն բնակչի տեսակետները ներառել, և մենք կարևոր համարեցինք ներգրավել բոլոր այն անձանց, որոնք տուժել էին աղամանդի արդյունահանումից և վտարումներից:

Մարանգեում համայնքի կողմից իրականացրած հետազոտությունը նշանակալի կերպով ուժեղացրեց մեր համայնքի պայքարը և դարձավ հզոր մոբիլիզացնող գործիք, որը համայնքներին հնարավորություն ընձեռեց կազմակերպվել և համախմբվել իրենց ընդհանուր օրակարգի շուրջ: Այսօր, Մարանգեում մարդիկ այլևս չեն վախենում հրապարակավ խոսել աղամանդի արդյունահանման հետ կապված իրենց խնդիրների մասին կամ կառավարությանը հարցեր տալուց: Քանի որ համայնքն ինքն էր գործընթացի և այս հետազոտության տերը, նրանք այնպես են անում, որ իրենց ձայնը լսելի լինի:



## Հարցեր քննարկման համար.

1. Ինչպե՞ս Մարանգե համայնքը որոշեց ամենակարևոր հարցերը հետազոտման համար:
2. Հետազոտությունն իրականացնելիս ի՞նչ մարտահրավերների բախվեց թիմը, և ինչպես արձագանքեց դրանց:
3. Ի՞նչ միջոցներ ձեռնարկեց համայնքը՝ նվազեցնելու անվտանգության հետ կապված ռիսկերը:

# Ո՞Վ ՊԵՏՔ Է ՆԵՐԳՐԱՎՎԻ ՁԵՐ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ


**23** Ովքե՞ր են ձեր հետազոտական թիմի անդամները

**26** **Ուշադրություն.** Մշակեք անվտանգության պլան

**27** Ովքե՞ր են ձեր աջակիցները, հետազոտության հասցեատերերը և ազդեցություն գործողները

**29** **Խմբային աշխատանք.** Աջակիցներ գտնելը

Հոյակա՞պ աշխատանք արեցիք և որոշեցիք ձեր հետազոտության թեման: Թեև համայնքի կողմից առաջնորդվող հետազոտությունը համատեղ աշխատանք է, որը ներգրավում է ամբողջ համայնքը, ավելի լավ է ունենալ առանձին հետազոտական թիմ, որը կիրականացնի հետազոտությունը և տվյալներ կհավաքի համայնքի այլ անդամներից: Միասին, դուք կարող եք որոշել, թե ինչպես իրականացնել հետազոտությունը, ինչ դերերի ու գործիքակազմի կարիք կա և սահմանել ողջամիտ ժամկետ հետազոտությունն իրականացնելու համար:

# ՈՎՔԵ՞Ր ԵՆ ՁԵՐ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԹԻՄԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ

Դիմեք համայնքի բնակիչներին՝ հետազոտական թիմ ձևավորելու համար: Մենք խորհուրդ ենք տալիս ձեր թիմի անդամներին հնարավորինս շուտ ներգրավել, որպեսզի նրանք կարողանան մասնակցել էական որոշումների կայացմանը: Փնտրեք մարդկանց, ովքեր հետաքրքրված են հետազոտության թեմայով, նվիրված են ծրագրի նպատակին և **ներկայացնում են համայնքի բազմազանությունը:** Օրինակ՝ միգուցե մտածեք, թե թիմի ամեն անդամ ինչպես կարող է լավագույս նպաստել գործընթացին, ներառյալ ժողովների և գործողությունների մասնակցելու նրանց կարողությունները, կամ համայնքում խոսվող բարբառներով նրանց խոսելու ունակությունը:



Ձեր հետազոտական թիմը տեղեկություններ կփոխանակի համայնքի ավելի լայն շրջանակների հետ, հարցեր կտա և կամբողջացնի հավաքած տեղեկությունները: Թիմը պետք է ներկայացնի համայնքում ապրող բազմատեսակ մարդկանց, հատկապես նրանց, ովքեր կարող է թերներկայացված կամ դուրս մնացած լինեն: Պետք է համամասնություն լինի կանանց և տղամարդկանց քանակների միջև:

Թիմի անդամների քանակը կախված կլինի հետազոտության ծավալից, բայց սովորաբար առնվազն 10 անձի կարիք է լինում: Թիմը կարող է նաև համատեղել քաղաքացիական հասարակության խմբերին և համայնքի անդամներին, սակայն իդեալականն այն է, երբ թիմի մեծ մասը բաղկացած է համայնքի անդամներից:

Դուք կարող եք ստորև բերված աղյուսակի նման միջոցներ կիրառել՝ հետազոտական թիմի թեկնածուների հակիրճ ցուցակը կազմելու համար: Լավ մտածեք, թե ինչպես կարող են նրանց սպեցիֆիկ որակավորումները համապատասխանել ձեր չափորոշիչներին.

| ՉԱՓՈՐՈՇԻՉ | Ալեքս | Սրեյմոն | Ումիդա |
|---|---|---|---|
| **Ընդհանուր հետաքրքրություն՞ն** | Զկնաբուծար անների հետ կապված հարցերը | Ազդեցությունը կանանց վրա | Երիտասարդների դերը |
| **Նվիրվածությու՞ն** | Հարկ եղած դեպքում կխոսի իր համայնքի հետ | Նվիրվածություն ողջ գործընթացին | Արդեն իսկ ունի շատ պարտականություններ |
| **Ի՞նչ կարող է անել** | Լավ է գրում և նկարում | Կարող է վարել կանանց հետ ֆուկուս խմբային քննարկումները | Լավ է հասկանում համակարգիչ ներից և տեխնոլոգի աներից |
| **Ներկայացնու՞մ է բազմազանությունը** | Խոսում է տեղական բառբառով | Ներկայացնում է կանանց խումբը | Ներկայացնում է երիտասարդներին |
| **Վատահությու՞ն** | Այո | Այո | Այո |
| **Նշումներ** | Քաղհասարակության խմբի նախկին անդամ | -- | Կարող է օգնել թիմին տեղեկացված լինել |

Ձեր թիմի հետ միասին հասկացեք, թե ինչու է հետազոտությունն իրականացվում, ինչի է ուզում ձեր համայնքը հասնել հետազոտության միջոցով և թե որն է լինելու թիմի ամեն անդամի դերը: Պարզեք՝ արդյո՞ք որևէ խոչընդոտներ կան, որոնք կարող են խափանել լիարժեք մասնակցությունը: Ի՞նչ տեսակի վերապատրաստման և աջակցության կարիք ունի ձեր թիմը:

Թիմի անդամները պետք է իրենց հարմար զգան մասնակիցների հետ անհատական, փոքր խմբերով և համայնքի լայն շերտերին ներգրավող հանդիպումներում շփվելիս և նրանցից հարցազրույց վերցնելիս:

Հիշե՛ք, հետազոտությունը փաստացի **տեղեկությունների փոխանակում** է: Թիմի ամեն անդամ պետք է հասկանա այն զարգացման ծրագրերը, որոնք հետազոտության մաս են կազմում:

Համայնքի անդամները կարող է հետազոտության թեմայի մասին առաջին անգամ լսեն հետազոտական թիմից, այնպես որ պատրաստ եղեք հարցազրույցից հետո բացատրել և փոխանցել ձեր իմացածը: Սա ձեզ կօգնի ճշգրիտ գրանցել մասնակցի գիտելիքները նախքան հարցազրույցը սկսելը:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

# ՄՇԱԿԵՔ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԼԱՆ



Նախքան հետազոտությունը սկսելը ձեր հետազոտական թիմը պետք է գնահատի բոլոր հնարավոր ռիսկերը և դրանք նվազագույնի հասցնելու պլան ունենա: Թիմը հավաքելիս սկզբում բացատրեք, որ նրանք կարող են հնարավոր ռիսկերի առերեսվել: Որպես թիմ, միասին ռիսկերի և սպառնալիքների գնահատում արեք, այնուհետև հարցրեք, թե արդյոք նրանք դեռ ուզում են մասնակցել:

Անպայման վերլուծեք ռիսկերը, որոնք կարող են լինել մասնակիցների համար և որոշեք, թե ինչպես մեղմել դրանք: Մտածե՛ք, թե ինչպես փոխանցել այս տեղեկությունները հետազոտության մասնակիցներին, որպեսզի ամեն ներգրավված անձ տեղյակ լինի ռիսկերից և եղած մեղմման միջոցներից:

**Ձեր անվտանգության պլանը ստեղծելուն օգնելու համար նայեք Front Line Defenders-ի Անվտանգության վերաբերյալ աշխատանքային ձեռնարկը. *http://bit.ly/SecurityPlanFrontLineDefenders*

# ՈՎՔԵ՞Ր ԵՆ ՁԵՐ ԱՋԱԿԻՑՆԵՐԸ, ՀԵՏԱՋՈՏՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵԱՏԵՐԵՐԸ ԵՎ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՂՆԵՐԸ

Այժմ, երբ արդեն սահմանել եք հետազոտության թեման համայնքի հետ միասին և հավաքել ձեր հետազոտական թիմը, պետք է որոշեք ձեր աջակիցներին, հետազոտության հասցեատերերին և ազդեցություն գործողներին:

**Աջակիցը** նա է, ով տարբեր ձևերով կարող է ձեզ օգնել հետազոտության հարցում: Ձեր համայնքի անդամները կարող են զբաղված լինել կամ կարող է ժամանակ չունենան իրենց ներդրումն ունենալ հետազոտության գործընթացի բոլոր փուլերում: Նման դեպքերում աջակիցներին դիմելը, որոնցից են ուսանողները և տեղի քաղաքացիական հասարակության խմբերը, կարող է օգտակար լինել:



Օրինակ՝ համալսարանի ուսանողը կարող է տեխնիկական օգնության առաջարկել հետազոտության գործիքակազմը նախագծելու կամ տեղեկությունները կանոնակարգելու համար: Կարող եք նաև **խորհուրդ և աջակցություն խնդրել այն համայնքներից,** որոնք արդեն անցել են համայնքի կողմից առաջնորդվող հետազոտության միջով, կամ այլ համայնքներից, որոնց սպառնում է համանման մի ծրագիր, ընկերություն կամ բանկ: Եթե գտնում եք, որ դիմելն անվտանգ է, ապա ակադեմիական ոլորտի աշխատողները և կառավարության անդամները կարող են օգնել վերլուծել հետազոտության արդյունքները և վեր հանել հիմնական տվյալները և միտումները: Ելնելով ձեր հետազոտության խնդիրներից՝ այլ աջակիցներ, որոնցից են քաղհասարակության կազմակերպությունները և արվեստի մարդիկ ևս կարող են ներկայացնել հետազոտության արդյունքները գրաֆիկի, գրավոր հաշվետվության կամ տեսագրության միջոցով:

**Ազդեցություն գործողը** նա է, ով կարող է վերահսկել կամ իր ազդեցությունն ունենալ այն թեմայի մի մասի վրա, որը դուք հետազոտում եք: Ազդեցություն գործողներից են ծրագիրը մշակողները, ֆինանսավորորդները, լրատվամիջոցները, տեղական պաշտոնյաները կամ կառավարության այլ անդամներ: Եթե ձեր հետազոտության նպատակը ջատագովությունն է, ապա վերը նշված ազդեցություն գործողները կարող են լինել նաև ձեր հետազոտության **թիրախը:**

Լավ կլինի մտածել, թե ինչպես եք ուզում հաղորդակցվել ձեր հասցեատերերի հետ, որպեսզի ձեր հետազոտությունը հնարավորինս մեծ ազդեցություն ունենա: Եթե անվտանգ է համայնքի, հետազոտության կամ արշավի համար, կարող եք կապվել որոշում կայացնողների և պաշտոնյաների հետ, ովքեր կարող են տեղեկություններ ունենալ ձեր հետազոտության թեմայի մասին: Ծանրութեթև արեք, թե ինչը կազդի նրանց վրա և նախապես որոշեք՝ ուզու՞մ եք արդյոք կապ հաստատել նրանց հետ և ինչպես: Եվ դարձյալ, եթե ապահով կլինի, հանդիպում նշանակեք կամ զանգեք նրանց՝ տեղեկացնելու հետազոտության մասին: Եթե լավ հարաբերություններ ունեք նրանց հետ, պարզեք, թե ինչ հարցերի պատասխաններ նրանք կուզենան ստանալ համայնքի կողմից արվող հետազոտության միջոցով: Տեղական, ազգային և միջազգային քաղաքացիական հասարակության կազմակերպությունները կարող են հավելյալ հետազոտական տեղեկություններ տրամադրել, և երբ հետազոտությունն ավարտվի, առավել **հնչեղություն հաղորդել հետազոտության ուղերձին**՝ դրա հասցեատերերի և որոշում կայացնողների ուշադրությունը գրավելու նպատակով:

Աջակիցների, ազդեցություն ունեցողների և հետազոտության հասցեատերերի հետ կապվելուց առաջ միասին որոշեք ձեր պարզ, հստակ ուղերձը: Ճշգրտորեն գրանցեք և կանոնակարգեք այս շփումները և հանդիպումների և խոսակցությունների գրավոր արձանագրություններ պահեք:

ԽՄԲԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ.

# ԱՋԱԿԻՑՆԵՐ ԳՏՆԵԼԸ

**Նպատակը.**
Պարզել և տեսանելի կերպով պատկերել ձեր հետազոտության հնարավոր աջակիցներին, ազդեցություն գործողներին և հասցեատերերին

**Անհրաժեշտ ժամանակ** 60-90 րոպե

**Անհրաժեշտ նյութերը.**
Ֆլիփ չարթի թուղթ, ինքնակպչուն կամ գունավոր թղթեր, կպչուն ժապավեն, գրիչներ, մարկերներ կամ այլ գրելու պարագաներ

## ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

Նախքան այս խմբային վարժությունը կատարելը պատրաստեք ֆլիփ չարթի պաստառ հետևյալ աղյուսակով.


| | |
|---|---|
| **Ո՞վ է տուժում մեր վեր հանած խնդրի պատճառով** | **Ո՞վ է արդեն իսկ ներգրավված այս թեմայի մեջ** |
| **Ո՞վ կարող է ազդել այս իրավիճակի վրա** | **Մեր մերձակայքում ապրողներից ո՞վ ունի հետազոտական փորձ** |

1. Խմբում մանրամասն անդրադարձեք ամեն հարցին հերթով: Որոշելուց հետո գունավոր թղթի կամ կպչուն թղթերի վրա գրեք ամեն անձի անունը կամ կազմակերպության անվանումը: Սրանք կարող են լինել պետական մարմիններ, հասարակական կազմակերպություններ, մասնավոր ընկերություններ, բանկեր կամ ներդրողներ: Իրավիճակի վրա ազդելու հարցի հետ կապված մտածեք, թե արդյոք այս անձը կամ կազմակերպությունը հնարավորություն կամ ռեսուրսներ ունեն փոխելու իրավիճակը՝ միգուցե կամ ստիպելով գործող օրենքներին աշխատել կամ բանակցելով ձեր անունից: Այլ կերպ ասած՝ եթե նրանք գործի անցնեն և իրադրությունն անմիջապես փոխվի, ուրեմն նրանք ազդեցություն գործողներ են:

2. Կպչուն կամ գունավոր թղթերը փակցրեք ֆլիփ չարթի համապատասխան աղյուսակի մեջ: Ստորև բերված են օրինակներ.

| | |
|---|---|
| **Ո՞վ է տուժում մեր վեր հանած խնդրի պատճառով**<br>*Գետի ներքևի մասում ապրող գյուղացիները*<br>*Հոգևորականները* | **Ո՞վ է արդեն իսկ ներգրավված այս թեմայի մեջ**<br>*Իրավաբանը* |
| **Ո՞վ կարող է ազդել այս իրավիճակի վրա**<br>*Մարզային կառավարությունը*<br>*Էներգետիկայի նախարարությունը* | **Մեր մերձակայքում ապրողներից ո՞վ ունի հետազոտական փորձ**<br>*Համալսարանի ուսանողները*<br>*Դպրոցի ուսուցիչները* |

**3** Աղյուսակի մեջ մեկ շրջանակ ավելացրեք՝ կենտրոնում գրելով հետևյալ հարցը. *«Ո՞ւմ հետ կարող ենք համագործակցել»:* Ելնելով ավելի վաղ բնորոշած մարդկանց խմբերից՝ հարցրեք թիմին, թե ըստ նրանց որ խմբերն են ամենակարևորը համագործակցելու առումով: Տեղափոխեք այդ խմբերին շրջանի մեջ:




**4** Ուշադիր նայեք այն դերակատարներին, ում դրել եք օղակի մեջ: Քննարկեք, թե նրանք ինչու պիտի ուզենան լինել ձեր աջակիցները, ինչը կարող է իրենց հետաքրքրել և մոտիվացնել, ինչով են կարող ձեզ օգնել և ինչպես եք ուզում աշխատել նրանց հետ:

Օրինակ՝.



**Հոգևորականները** կարող են ձեզ օգնել տեղեկացնել իրենց համայնքին



**Դպրոցի ուսուցիչները** կարող են օգնել վերլուծել տվյալները



**Համալսարանի ուսանողները** կարող են նոթեր գրել հարցազրույցների և հանդիպումների ժամանակ

5. Ուշադրություն դարձրեք «Ո՞վ կարող է ազդել այս իրավիճակի վրա» շրջանակում գտնվողների վրա: Սրանք ձեր հետազոտության հիմնական հասցեատերերն են: Մտածեք նրանց հետ կապ հաստատելու տարբերակների շուրջ: Փորձեք պարզել՝ ի՞նչ թերթ են նրանք կարդում, ի՞նչ ռադիո կամ հեռուստահաղորդումներ են դիտում, և նույնիսկ կարող եք գտնել նրանց սոցցանցերի հաշիվները: Միգուցե միջնորդի կարիք լինի, ով կարող է ձեզ ներկայացնել նրանց կամ հանդիպում կազմակերպել ձեր համար:

   → Այն մարդիկ, ում դուք շրջանակից դուրս եք թողել, ևս կարող են կարևոր անձիք լինել նրանց հետ աշխատելու իմաստով, բայց միգուցե բավարար տեղեկացված չլինեք նրանց մասին կամ առայժմ նրանց չվստահեք: Պահեք նրանց ձեր տեսադաշտում, քանի որ հնարավոր է ուզենաք կապ հաստատել նրանց հետ ապագայում:

6. Խորհուրդ ենք տալիս պատճենահանել ձեր քարտեզը առանձին թղթի վրա, որը կարող եք պահել: Դուք կկարողանաք այս նույն քարտեզն օգտագործել անվտանգության հետ կապված վերլուծությունն անելիս ինչպես նաև ձեր հետազոտության արդյունքների համար թիրախ լսարանը որոշելիս:

***Ամփոփում.*** Կարևոր է հնարավորինս շատ ինֆորմացիա ունենալ առ այն, թե ով կարող է կամ չի կարող լինել ձեր աջակիցը: Աջակիցներ ձեռք բերելը սկսվում է վստահություն կառուցելուց: Աջակիցները չպետք է կառավարեն կամ վերահսկեն այն, ինչ ցանկանում է ձեր համայնքը: Հիշեք, որ ձեր աջակիցների հետ հարաբերությունները կարող են փոխվել ժամանակի ընթացքում: Լավ կլինի պարբերաբար վերանայեք ձեր աղյուսակը:

# ԻՆՉՊԵ՞Ս ՊԵՏՔ Է ԻՐԱԿԱՆԱՑՆԵՔ ՁԵՐ ՀԵՏԱՋՈՏՈՒԹՅՈՒՆԸ


**35** Հետազոտական գործիքակազմի նախագծում

**39** **Խմբային աշխատանք.** ճանաչիր հարևաններիդ

**42** Համայնքի կողմից առաջնորդվող հետազոտության փորձ. Սուխգերելի պատմությունը

**46** Վերապատրաստեք ձեր թիմին

**49** **Ուշադրություն.** Ապահովությունն ու անվտանգությունը հաղորդակցվելիս

**50** Հավաքեք ձեր տվյալները

**54** **Ուշադրություն.** Ապահովությունն ու անվտանգությունը տվյալներ հավաքելիս


Այս կետում դուք գիտեք, թե ինչի շուրջ է ձեր հետազոտությունը և ով պետք է ներգրավվի: Իսկ փաստացի ինչպե՞ս եք իրականացնելու համայնքի կողմից ղեկավարվող հետազոտությունը: Նախքան տվյալներ հավաքելը կարևոր է, որ սկզբում նախագծեք ձեր հետազոտության գործիքակազմը և ստեղծեք տվյալների հավաքման ձեր համակարգը:

# ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԻ ՄՇԱԿՈՒՄ

Համայնքի կողմից ղեկավարվող հետազոտությունը կարելի է իրականացնել տարբեր մեթոդների կիրառմամբ, որոնցից են հարցումները, հարցազրույցները և ֆոկուս-խմբային քննարկումները: Օրինակը, որը մենք կքննարկենք, «Համայնքի կողմից առաջնորդվող հարցման» ձևանմուշն է: Այլ հետազոտական գործիքների համար հավելյալ տեղեկություններ ստանալու նպատակով դիտարկեք հետևյալ ռեսուրսները.

- Ֆոկուս խմբային քննարկումներ.
  *https://bit.ly/FocusGroupDiscussion_RA*
- Հարցազրույցներ.
  *http://bit.ly/CommunityToolboxInterviews*
- Համայնքի քարտեզագրում.
  *https://bit.ly/ResearchForOrganizing*
- Համայնքային արձանագրություններ
  *https://bit.ly/NJ_CommunityProtocolsToolbox*

**Հարցումը** մի խումբ մարդկանցից նրանց փորձառությունները կամ կարծիքները հավաքելու մեթոդ է հարցեր տալու միջոցով: Համայնքի կողմից ղեկավարվող հարցումը, ի տարբերություն ավանդական հարցման, միայն տեղեկություններ հավաքելու մասին չէ. այն նաև հնարավորություն է տալիս տեղեկություններ և ընկալումներ փոխանակել համայնքի և հետազոտական թիմի միջև: Այս հետազոտական գործիքի կիրառման որոշ առավելություններ և թերություններ ներկայացված են ստորև.



| Հարցման կիրառման առավելությունները | Հարցման կիրառման թերությունները |
|---|---|
| Քանի որ կա հարցերի ստանդարտ շարք, տենդենցներն ու հարաբերությունները կարելի է հեշտ պարզել | Իրավական և սոցիալական իրողությունները կարող են դժվարեցնել ողջ համայնքի ներկայացուցչական ընտրանք կազմելը |
| Կարելի է անել մեծ մասշտաբով և ներառել մեծ քանակի անձանց պատասխանները | Պետք է հաշվի առնի կիրառվող լեզուն և մասնակիցների գրագիտության մակարդակը |
| Ընկալվում է որպես գիտական կամ օբյեկտիվ հետազոտական մեթոդ | Պետք է հավաստիանալ, որ մասնակիցները հասկանում են հարցերը |
| Տալիս է քանակական արդյունքներ և ընդհանրացված տվյալներ, ինչն ավելի գերադասելի է հանրային քաղաքականություն մշակողների և լրատվամիջոցների համար | Պատասխանները հաճախ պարզունակ են կամ սահմանափակվում են ներկայացված տարբերակներով և պահանջում են մեթոդների համակցություն, որոնցից են անհատական հարցազրույցները կամ ֆոկուս խմբային քնարկումները՝ մանրամասն և բարդ պատասխաններ ստանալու համար |
| Մասնակիցներին թույլ է տալիս մնալ անանուն, որպեսզի մարդիկ ավելի անկեղծ լինեն իրենց փորձառությունների և կարծիքների մասին խոսելիս | Իրողությունները և վերաբերմունքը փոխվում են, որոնք կարող են ժամանակի ընթացքում ազդել պատասխանների ճշգրտության վրա |
| Հաճախ թանկ չէ հավաքել, ի մի բերել և կոնսոլիդացնել տվյալները | Հետազոտությունն իրականացնելու համար անհրաժեշտ են հմտություններ և ցուցումներ |

**Այս աղյուսակի հիմքում ընկած է Ռադգերս WPF's-ի «Երիտասարդներին որպես հետազոտողներ վերապատրաստելու ձեռնարկ»-ի 24-րդ էջը: Այն կարելիէ գտնել այստեղ. *http://bit.ly/ManualforYoungResearchers*

Եթե ձեր թիմը որոշի հարցում իրականացնել, համոզվեք, որ հարցերը **թիրախային են, հեշտ են հասկացվում և կազմված են համագործակցային ձևով:** Հարցերը կարող են անդրադառնալ թեմաների լայն բազմազանության՝ ելնելով համայնքի կողմից առաջնորդվող հարցման նպատակներից: Օրինակ՝ դուք կարող եք որոշել, թե արդյոք որոշ հարցերի համար անհրաժեշտ են «այո» կամ «ոչ» պատասխաններ, «հնարավոր հարցերի տարբերակների ընտրություն» թե տողեր բաց պատասխանների համար:

Պատասխանները կարող են հիմնվել անձնական փորձառությունների վրա կամ արտահայտեն համայնքի ուզած զարգացումը:



Պատկերացրեք, որ համայնքի անդամները կարող են կորցնել իրենց տները՝ տեղ ազատելու հողմային տուրբինների կառուցման համար: Եթե ուզում եք իմանալ, թե համայնքն ինչ է մտածում այս ծրագրի մասին, ի՞նչ հարցեր կտաք նրանց:

Գրեք ձեր գաղափարներն այստեղ.

.....

.....

.....

.....

.....

Կարող եք տալ այսպիսի հարցեր.

1. *«Եթե ստիպված լինեք գնալ այստեղից, դա ինչպե՞ս կազդի ձեր երեխաների վրա»*

2 *«Եթե ստիպված լինեք գնալ այստեղից , դա ինչպե՞ս կազդի ձեր աշխատանքի կամ ապրուստի միջոցների վրա»*

3 *«Եթե պետք է գնաք այստեղից, ի՞նչ ընդհանուր ռեսուրսներ կամ վայրեր (օրինակ՝ դպրոցներ, տաճարներ կամ գետեր) կկորցնեք:*

Վերանայեք հարցման նախնական տարբերակը ձեր հետազոտական թիմի հետ միասին՝ համոզվելու, որ հարցերը **հստակ են, կազմակերպված և հեշտ ընկալելի:** Խրախուսեք ձեր թիմին վստահություն ձեռք բերել՝ միմյանց հետ հարցազրույց անցկացնելով: Հաշվեք, թե ինչքան ժամանակ պետք կլինի ավարտելու հետազոտությունը և համապատասխանաբար պլանավորեք համայնքային հանդիպումները կամ այցերը:

Սույն Ուղեցույցին օժանդակելու համար մենք Օգտակար նյութերում ներառել ենք մեր համայնքի ակտիվիստների կողմից ստեղծված *Համայնքի կողմից առաջնորդվող* հարցաշարը, որը փորձարկվել է ողջ աշխարհում: Կա նաև ուղեցույց, որը բացատրում է հարցերի հիմքում ընկած նկատառումները, ինչպես նաև առաջարկներ, թե ինչպես տալ տարբեր տեսակի հարցերը: Կիրառեք կամ ադապտացրեք այս հարցաշարի ձևանմուշը, կամ նորը մշակեք ձեր համայնքի համար:




# ԽՄԲԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ. ՃԱՆԱՉԵ՛Ք ՁԵՐ ՀԱՐԵՎԱՆՆԵՐԻՆ



**Նպատակը.**
Ծանոթանալ Հարցաշարի հարցերի հետ և հմտանալ համայնքի անդամներից հարցազրույց վերցնելու մեջ



**Անհրաժեշտ ժամանակ** 1 ժամ




**Անհրաժեշտ նյութերը.**
Գրիչներ, Համայնքի կողմից առաջնորդվող ուսումնասիրության հարցաշարի օրինակներ (ներառված է Գործողություններին վերաբերող նյութերում)

## ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

1. Խնդրեք մասնակիցներին իրենց զույգ գտնել, և յուրաքանչյուրին տվեք հարցաշարի մեկ օրինակ: Պատկերացրեք, որ պատրաստվում եք հարցազրույց վերցնել ձեր հարևաններից՝ կիրառելով հարցաշարի օրինակը: Նշեք, որ մասնակիցները պետք է փորձեն պատասխանել՝ ելնելով իրենց իսկ փորձառություններից:
2. Խնդրեք ամեն զույգին իրենց համար մի հարմար վայր գտնել, նստել և սկսել վարժությունը: Բացատրեք, որ ամեն մասնակից հարցազրույց կվերցնի իր զույգից 20 րոպե տևողությամբ՝ հարցեր տալով հարցաշարից, լսելով և գրանցելով նրանց պատասխանները:
3. Տաս րոպե անց խնդրեք բոլորին կանգ առնել և նայել տրված պատասխաններին: Հարցերին պատասխանող անձանց խնդրեք ստուգել, թե արդյոք իրենցից հարցազրույց վերցնողները ճիշտ են

գրանցել իրենց բացատրությունները կամ պատասխանները: Միգուցե ուզենաք հարցման մի օրինակ տրամադրել խմբին և ընդգծել հարցազրույց վերցնելիս մանրամասն նշումներ անելու կարևորությունը:



4 Եվս տաս րոպե անց պետք է փոխվել տեղերով. քիչ առաջ հարցեր տվող անձը հիմա ինքը պետք է պատասխանի դրանց: Շարունակեք նույն գործընթացը՝ կրկնելով 2-րդ և 3-րդ քայլերը:

5 Երբ բոլոր զույգերը հնարավորություն են ունեցել միմյանցից հարցազրույց վերցնել, վերադարձեք մեծ խումբ և խնդրեք ամեն զույգին մտածել, թե ինչպես անցավ հարցազրույցը: Տվեք հետևյալ հարցերը.

- Ձեզ հարմա՞ր էիք զգում հարցերին պատասխանելիս
- Դժվարություններ կայի՞ն հարցեր տալիս
- Ի՞նչ էիք զգում որպես հարցվող
- Ի՞նչ արեցիք, որպեսզի ձեր զրուցակիցը հարմար զգա հարցերին պատասխանելիս
- Ի՞նչ էիք զգում հարցերին պատասխանելիս
- Կայի՞ն հարցեր, որոնք հստակ չէին:

6. Մասնակիցներին խնդրեք մեկնաբանել միմյանց՝ հարցազրույց վարելու տեխնիկաները և խորհուրդներ տալ, թե ինչպես համապատասխանեցնել և 6. Մասնակիցներին խնդրեք մեկնաբանել միմյանց՝ հարցազրույց վարելու տեխնիկաները և խորհուրդներ տալ, թե ինչպես համապատասխանեցնել և բարելավել հարցաշարի հարցերը՝ լավագույնս հարմարեցնելու ձեր համայնքի համատեքստին:

7. 5 – 10 րոպե տրամադրեք քննարկելու այն հարցերը, որոնք պետք է փոխվեն կամ հստակեցվեն և ավելացրեք այլ կարևոր հարցեր, որոնք կարող են բացակայել հարցաշարից:

***Ամփոփում.*** Հետազոտողները պետք է լավ լսելու ունակություն ունենան: Լսե՛ք, թե հարցվողներն ինչ են պատասխանում: Ամեն հարց կարդացեք բարձրաձայն, հստակ և դանդաղ: Հարցվողներին տվեք այնքան ժամանակ, որքան նրանց անհրաժեշտ է արտահայտվելու համար: Մի՛ ընդհատեք կամ քննադատեք նրանց պատասխանները: Հետևե՛ք նրանց մարմնի լեզվին և ընդմիջե՛ք, եթե նրանք հուզվեն: Երբեմն հարցազրույց տալը կարող է սթրեսային լինել:

***Յուցումներ վարժությունը վարողի համար.*** Այս վարժությունը կօգնի ձեր թիմին փորձարկել իրենց հարցազրույց վարելու հմտությունները և ծանոթանալ հարցաշարի ոճին և հարցերին: Կարևոր է, որ մասնակիցները բավարար ժամանակ ունենան ամեն հարցին անդրադառնալու համար: Սակայն, եթե ձեր ժամանակը սուղ է, կարող եք հարմարեցնել վարժությունը, որպեսզի մասնակիցները չմտածեն, որ ողջ հարցաշարը պետք է ավարտեն միանգամից:

## ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋՆՈՐԴՎՈՂ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ.

# ՍՈՒԽԳԵՐԵԼԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ



Ողջույն, ես Սուխգերելն եմ: Ես աշխատում եմ մի կազմակերպությունում, որն աջակցում է Մոնղոլիայի քոչվոր համայնքներին և այնպես անում, որ զարգացման կազմակերպությունները հարգեն մարդու և շրջակա միջավայրի իրավունքները:

Վերջին մի քանի տարվա ընթացքում ես աշխատում եմ քոչվոր անասնապահ համայնքների հետ, որոնք տեղահանվել են Մոնղոլիայի Օյու Թոլգոյ և Թայան Նուր հանքերի պատճառով: Տեղական կազմակերպության հետ միասին մենք իրականացրեցինք համայնքի կողմից վարվող հետազոտություն՝ հասկանալու, թե մարդիկ ինչ էին կարծում հանքերի մասին և տրամադրեցինք այս տեղեկությունները ծրագրեր ֆինանսավորող զարգացման կազմակերպություններին:

Համայնքն ինքը որոշեց հետազոտության թեման: Մենք նստեցինք տուժած նախրապանների համայնքի հետ և բացահայտեցինք այն խնդիրները, որոնք ամենակարևորն էին իրենց համար: Վերաբնակեցումը և փոխհատուցումը խնդիրների ցուցակի վերին հատվածում էին, քանի որ համայնքներն արդեն կորցրել էին իրենց հողը հանքի պատճառով: Բոլորը համաձայն էին, որ իրենք ցանկանում էին համարժեք փոխհատուցում, և սա դարձավ շահերի պաշտպանության մեր նպատակը: Սակայն այն, թե ինչ էր նշանակում

Սուխգերել Դուգերսուրենը OT Watch-ի գործադիր տնօրենն է, մոնղոլական կազմակերպություն, որը Գոբի անապատում մշտադիտարկում է Օյու Թոլգոյ պղնձի հանքը, որի պատճառով քոչվոր նախրապանները զրկվել են իրենց ջրից ու արոտավայրերից: Ստորև Frontline Defenders կազմակերպության կողմից հրատարակած Սուխգերելի նկարազարդ պատմությունն է գրաֆիկական վիպակի տեսքով. *bit.ly/FrontLineSukhgerel*

Սուխգերելը ՄՀԾ-ի (IAP) Ջատագովության գլոբալ թիմի անդամ է, նախաձեռնություն, որի նպատակն է միավորել զարգացման ծրագրերի հետ առնչվելու անմիջական փորձ ունեցող համայնքային կազմակերպիչներին վարելու համայնքի կողմից իրականացվող հետազոտություն և մոբիլիզացնելու իրենց

«համարժեք», հետագա քննարկումների թեմա դարձավ:

Մեր առաջին քայլն ամբողջ համայնքի համար վերապատրաստում իրականացնելն էր մարդու իրավունքների և համապատասխան միջազգային ստանդարտների մասին: Սրանից հետո մեր հետազոտական թիմը կազմավորվեց բնականոն կերպով և բաղկացած էր տուժած համայնքները ներկայացնող 5 նախարապանից: Մենք աջակցեցինք թիմին՝ նրանց առաջնորդելով հետազոտության ողջ գործընթացում և նրանց ավելի շատ տեղեկություններ տրամադրեցինք հանքերի ազդեցության և դրանցում ներգրավված զարգացման բանկերի քաղաքականության վերաբերյալ: Մենք բացատրեցինք հարցման նպատակը և ամեն հարցի հիմքում ընկած տրամաբանությունը: Քանի որ մենք կիրառում էինք հարցաշարի ձևանմուշը, կային հարցեր, որոնք հավելյալ բացատրման կամ աղապտացման կարիք ունեին՝ մոնղոլական համատեքստին համապատասխանելու համար:

Քանի որ մենք աշխատում էինք քոչվոր համայնքների հետ, դժվար էր ամբողջ համայնքին մեկ տեղ հավաքել: Դրա փոխարեն մեր հետազոտողները գնացին դռնեդուռ և խոսեցին տարբեր ընտանիքների հետ: Տարածությունը, որը մենք ստիպված էինք անցնել, շատ երկար էր. Գոբիի տարածաշրջանում վաչկատուն ընտանիքի ամենամոտ հարևանը կարող է 5 կմ հեռու լինել: Մենք նաև տարածաշրջանի ղեկավարին խնդրեցինք հանդիպում կազմակերպել, որտեղ կարողացանք հարցում անցկացնել 20 ընտանիքի հետ: Մենք նաև որոշեցինք հարցազրույց վերցնել տեղական ինքնակառավարման մարմնի աշխատակիցներից՝ հասկանալու, թե ինչքանով էին նրանց պատասխանները համայնքներին՝ փոխելու զարգացման ընկալումն ու ձևը: Կարդացեք նրանց զեկույցն այստեղ. *bit.ly/back-todevelopment*
Սուխգերելի հետազոտության մեջ կիրառված հարցաշարը Գլոբալ շահերի պաշտպանության թիմի կողմից մշակված Հարցաշարի ձևանմուշն է, որը ներառված է Օգտակար նյութերում:




> Մենք իրականացրեցինք համայնքի կողմից վարվող հետազոտություն՝ հասկանալու, թե մարդիկ ինչ էին կարծում հանքերի մասին:

> Մեր առաջին քայլն ամբողջ համայնքի համար վերապատրաստում իրականացնելն էր մարդու իրավունքների եւ համապատասխան միջազգային ստանդարտների մասին:

տարբերվում համայնքների կողմից տրված պատասխաններից: Ընդհանուր առմամբ, 100 հոգուց հարցազրույց վերցրեցինք:

Հետազոտությունն իրականացնելիս ամեն հարց կարդում էինք բարձրաձայն, բացատրում էիք դրա նշանակությունը և սպասում էինք, որ ընտանիքները լրացնեն իրենց պատասխանները: Մարդկանց մեկ սենյակում հավաքելը հեշտ տարբերակ էր համայնքի ավելի շատ անդամների հանդիպելու, սակայն հասկացանք, որ նման միջավայրում մասնակիցները հակված են լսել և համաձայնվել խմբի կարծիքի հետ: Պատասխանները, որ ստացանք դռնեդուռ այցելելիս, ավելի լավ էին արտահայտում անհատական կարծիքները:



Անգլերեն խոսող կամավոր ուսանողների խումբն օգնեց մեզ թարգմանել և վերլուծել տվյալները: Թարգմանության ընթացքում մենք կարողացանք որոշ էական առաջարկություններ բացահայտել: Մենք ֆինանսավորում ստացանք հետազոտության արդյունքներին համայնքին ծանոթացնելու համար, սակայն մեծ տարածությունների պատճառով շատ դժվար էր այցելել ամեն մեկին, ով մասնակցել էր հարցմանը:

Համայնքի կողմից առաջնորդվող հետազոտության գործընթացն օգնեց տեղեկացնել համայնքին ծրագրի և իրենց իրավունքների մասին և համաձայնության գալ իրենց առաջնահերթությունների շուրջ: Այսօր այս տուժած համայնքների անդամները իրենց գիտելիքն են փոխանցում մյուսներին, ովքեր ևս նման խնդիրների առաջ են կանգնած: *Հարցաշարի ձևանմուշն* այն համայնքներին փոխանցելը, որոնք դեռ նման ծրագրի առարկա պիտի դառնան ևս շատ օգտակար է եղել այն առումով, որ նրանք իմանան, թե ինչ խնդիրներ և հարցեր բարձաձայնել ծրագիրը պլանավորողների հետ խոսելիս: Հարցաշարը կարևոր գործիք է դարձել օգնելու մարդկանց մտածել այս խնդիրների մասին և թե ինչ է զարգացումը նշանակում իրենց համար:



## Հարցեր քննարկման համար.

1. *Ո՞վ միացավ հետազոտական թիմին և ինչպե՞ս կազմավորվեց թիմը,*
2. *Ի՞նչ մեթոդներ կիրառեցին Սուխգերելն ու թիմը տվյալներ հավաքելու համար,*
3. *Իրենց հետազոտությունն իրականացնելիս Սուխգերելն ու թիմը ստիպված էին երկար տարածություններ անցնել՝ համայնքի անդամների հետ հարցումներ անելու նպատակով: Ձեր հետազոտությունն իրականացնելիս ի՞նչ լոգիստիկ խնդիրներ դուք կարող եք ունենալ և ինչպե՞ս կլուծեք դրանք:*

# ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏԵՔ ՁԵՐ ԹԻՄԻՆ

Հիմա, երբ ձեր թիմը որոշ փորձ ունի հարցազրույց վերցնելու և հարցաշարի ձևանմուշը կիրառելու հարցում, մտածեք որոշ «կանոնների» կամ ցուցումների մասին առ այն, թե ձեր թիմի անդամներն իրենց ինչպես պետք է պահեն հետազոտությանը մասնակցող համայնքի անդամների և համայնքից դուրս գտնվող աջակիցների հետ: Կարող եք նման վարժանք իրականացնել ըստ ստորև նկարագրվածի.


- Խնդրեք թիմի անդամներին մտածել և պատմել իրենց ունեցած ամենահաջող հարցազրույցի փորձառության մասին և խորհել այն մասին, թե ինչն այդ քննարկումը հաջող դարձրեց
- Խնդրեք թիմի անդամներին մտածել և պատմել իրենց ունեցած ամենաանհաջող հարցազրույցի փորձառության մասին և խորհել այն մասին, թե ինչն այդ քննարկումն անհաջող դարձրեց
- Խնդրեք թիմի ամեն անդամի առաջարկել մեկ բան, ինչը նրանք կարող են անել, որպեսզի ամենահաջող հարցազրույցի փորձը կրկնվի ամեն անգամ
- Խնդրեք թիմի ամեն անդամի առաջարկել մեկ բան, ինչը նրանք կարող են անել՝ կանխելու կամ հարթելու դժվար իրավիճակները հարցազրույցի ժամանակ, օրինակ՝ եթե հանկարծ որևէ մասնակից շատ էմոցիոնալ դառնա կամ իշխանություններն ընդհատեն հարցազրույցը:

Մտածեք, թե ձեր ծրագիրն ինչպես կարող է ազդել ներգրավված անձանց վրա: Գրեք վերևում տրված հարցերի պատասխանները և հարցրեք բոլորին՝ արդյո՞ք նրանք համաձայն են թե համաձայն չեն ամեն առաջարկի հետ: Սրանք կհանդիսանան ձեր ուղեցույցի հիմքը: Սրանք օրինակներ են, որոնք միջուցե ուզենաք ներառել.

- Ձեզ պատշաճ ներկայացրեք և հստակ ու ազնիվ կերպով բացատրեք հետազոտության նպատակը
- Ստացեք համայնքի անդամների համաձայնությունը՝ նախքան նրանց հետազոտության մեջ ներառելը և տեղեկացրեք նրանց, որ իրենց հայտնած տեղեկությունները գաղտնի կմնան
- Բացատրեք, որ մասնակիցն իրավունք ունի ցանկացած ժամանակ դադարեցնել մասնակցությունը հետազոտությանը
- Լսեք համակ ուշադրությամբ
- Զգույշ եղեք մարմնի լեզվի և ոչ-վերբալ պատասխանների հարցում. դրանք կարող են բառերի պես անհարգալից լինել
- Հարգեք մարդկանց անձնական տարածքը
- Եթե վստահ չեք, որ հասկանում եք մասնակցի պատասխանը, պարզաբանում խնդրեք

- Եթե ինչ-որ մեկը ձեր օգնության կամ խորհրդի կարիքն ունի, իսկ դուք ինքներդ չեք կարող այն տրամադրել, խնդրեք որևէ աջակցի կամ մասնագետի դա անել
- Խոստացեք, որ հետազոտական թիմը կպաշտպանի բոլոր մասնակիցների ինքնությունը և որ հետազոտական թիմից դուրս ոչ ոք չի կարողանա բացահայտել իրենց անհատական պատասխանները
- Հարցաշարը և տվյալները գաղտնի և ապահով պահեք:

Հիշեք՝ նպատակը մասնակիցների հետ համաձայնվելը չէ, այլ ավելի խորը պատկերացում ունենալ հետազոտության թեմայի շուրջ նրանց մտքերի և գաղափարների վերաբերյալ:



Կարևոր է հարցման ընթացքում չեզոք դիրք պահպանելը: Այս հնարավոր մարտահրավերը քննարկելու համար կարդացեք հետևյալ օրինակը ձեր հետազոտական թիմի համար և քննարկեք խմբում.

*«Դուք հետազոտական թիմի անդամ եք և հարցում եք իրականացնում ձեր համայնքի անդամների շրջանում: Հարցման ժամանակ մասնակիցներից մեկը անդրադառնում է վերջերս տեղի ունեցած մի կոնֆլիկտի, որում ներգրավված էր նաև ձեր ընտանիքի անդամը: Դուք անում եք հնարավորը՝ չեզոք մնալու համար, սակայն խոսակցությունը գնալով ավելի էմոցիոնալ է դառնում, և մասնակիցը մի միտք է արտահայտում, որը ձեր կարծիքով անաչառորեն չի ներկայացնում կոնֆլիկտը: Ի՞նչ կանեք դուք»:*



## Հարցեր քննարկման համար.

1. *Ի՞նչպես կարձագանքեք այս իրավիճակին:*
2. *Հետազոտական թիմը նախկինում բախվե՞լ է նման խնդրի:*
3. *Ի՞նչ կարող է թիմն անել՝ հաշվի առնելու մասնակցի ասածը, բայց նաև չեզոք մնալու համար:*

***Այս վարժությունն ադապտացվել է Access Alliance-ի կողմից թողարկված Համայնքի կողմից առաջնորդվող հետազոտության գործիքակազմում եղած «Էթիկական երկընտրանքները համայնքի կողմից առաջնորդվող հետազոտության մեջ» գլխից: Ավելին կարող եք տեսնել. https://bit.ly/CBRToolkit, 132-136էջերում:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

# ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆՆ ու ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ





Նախքան տվյալների հավաքագրումը սկսելը վստահ եղեք, որ ձեր անվտանգության պլանն անդրադառնում է անվտանգ հաղորդակցության հնարավոր խնդիրներին և ապահովում է բոլոր տվյալների գաղտնիությունը:

Միջոցներ ձեռնարկեք՝ ապահովելու ձեր հետազոտական թիմի և հարցազրույց տվողների ինքնության գաղտնիությունը: Հետազոտական թիմը և մասնակիցները կարող են թիրախավորվել հետազոտության մեջ իրենց ունեցած դերի համար: Նման իրավիճակներում կարևոր է մարդկանց ինքնությունը գաղտնի պահելը: Օրինակ՝ համայնքներից մեկում իշխանությունները և եկան և հարցրեցին. «Ո՞վ է հետազոտության և արշավի ղեկավարը»: Համայնքի ադամները որևէ կոնկրետ անուն չտվեցին և այս դեպքից հետո գյուղի ամեն բնակչի սկսեցին «ղեկավար» անվանել՝ բացահայտումից խուսափելու համար:

Անվտանգության մի միջոց, որը կարող եք ձեռնարկել, հաղորդակցությունը ձեր թիմի անդամների միջև ապահով պահելն է: Սա կարելի է անել՝ խուսափելով գաղտնի տեղեկությունները էլ. փոստով ուղարկելուց , ինչպես նաև հեռախոսով խոսելիս կիրառել տեղեկությունների փոխանցման կոդավորված համակարգեր:

Ավելի շատ տեղեկատվության և թվային անվտանգության մասին խորհուրդների համար տեսեք Security in a Box-ը այս հղման մեջ. *http://bit.ly/SecurityInABox*

# ՀԱՎԱՔԵՔ ՁԵՐ ՏՎՅԱԼՆԵՐԸ

Այս կետում ձեր թիմն արդեն վերապատրաստված է և ձեր հետազոտական գործիքակազմը՝ մշակված: Ժամանակն է հավաքել ձեր տվյալները և իրականացնել հետազոտությունը:

Մասնակիցներին ընտրելու համար խորհուրդ հարցրեք այն անձանցից, ովքեր ակտիվ են համայնքային կազմակերպություններում և շատերին գիտեն համայնքում: Որոշեք, թե հետազոտական թիմը համայնքային խոսակցությունների մեջ ինչպես է ներառելու հաճախ թերներկայացված կամ անուշադրության մատնված անձանց: Ձեր թիմի ներսում պատասխանեք հետևյալ հարցերին.

- *Ո՞մ ենք մենք հարցնելու: Ինչպե՞ս կարող ենք վստահ լինել, որ տվյալներ ենք հավաքում խմբերից, որոնք իրապես համայնքն են ներկայացնում,*
- *Որո՞նք են հենց նրանց ընտրելու պատճառները,*
- *Քանի՞ մարդու հետ պետք է խոսենք,*
- *Որո՞նք են այն հնարավոր խնդիրները, որոնք կարող ենք ունենալ մեր մասնակիցների մոտ գնալու պատճառով: Ինչպե՞ս պետք է լուծենք այս հարցերը:*

Ամբողջ համայնքին հետազոտության մեջ ներգրավելը կարող է հնարավոր չլինել: Համայնքին ներկայացնող տեսակետների ընտրանք ունենալու համար նպատակ դրեք հետազոտությունն իրականացնել առնվազն 100 մարդու մասնակցությամբ: Այս ընտրանքը պետք է ներ ներառի թիրախ համայնքների տարբեր խմբերի:




Օրինակ՝ եթե պատրաստվում եք 100 հարցում հավաքել 5 գյուղից, հետազոտական թիմը պետք է խոսի ամեն գյուղի մարդկանց հետ, ոչ թե 1-2-ի: Եթե որոշ մարդիկ որոշեն չմասնակցել հետազոտությանը, համոզվեք, որ հետազոտական թիմը գիտի, թե ովքեր են նրանք:

Երբ արդեն որոշել եք, թե ում հետ պետք է խոսեք, կազմակերպեք և պլանավորեք ձեր հետազոտության գործընթացը: Նկատի ունեցեք հետևյալը.

- *Սահմանեք ժամանակահատված, թե ինչքան կտևի մասնակիցների հետ խոսելը,*
- *Պատճենեք հարցաշարը և համարակալեք դրանք՝ որպեսզի կարողանաք դրանք վերահսկել,*
- *Հարցազրույց վերցնելուց առաջ նախապես տեղեկացրեք մասնակիցներին,*
- *Իրականացրեք ձեր հետազոտությունն այնպիսի ժամանակ և վայրում, որն ապահով և հարմար կլինի մասնակիցների մեծ մասի համար,*
- *Անպայման հաշվի առեք համայնքի ապրուստի միջոցները, սեզոնային ցիկլերը և մշակույթը: Օրինակ՝ եթե ամռանն օրվա ընթացքում համայնքի անդամների մեծ մասն աշխատում են դաշտերում, կարող է հարկ լինել հետազոտությունն իրականացնել երեկոյան:*

Ձրույցը հետազոտության մասնակցի հետ սկսելու ժամանակ հիշեք ձեզ տրված ցուցումները և պատրաստ եղեք տեղեկություններ հաղորդել մասնակիցներին, որպեսզի նրանք լիարժեք տեղեկացված լինեն հետազոտության թեմայի մասին: Ձեր ծանոթացումը կարող է լինել այսպիսին:



- *Ասացեք մասնակցին, թե դուք ով եք, որ համայնքից կամ կազմակերպությունից եք,*
- *Բացատրեք հետազոտության նպատակը. ինչի մասին է այն և ինչու եք այն իրականացնում,*
- *Բացատրեք, թե ինչպես պիտի օգտագործեք նրանցից ստացած տեղեկությունները*
- *Բացատրեք, որ նրանք անանունության և գաղտնիության իրավունք ունեն, և որ հետազոտության ընթացքում ցանկացած պահի կարող են հրաժարվել մասնակցությունից*
- *Նախքան սկսելը հարցրեք՝ արդյո՞ք մասնակիցը հարցեր ունի*
- *Հարցրեք՝ արդյո՞ք նրանք ցանկանում են մասնակցել հետազոտությանը. սա կոչվում է ստանալ «իրազեկ համաձայնություն»:*

Համայնքում բոլորը չէ, որ կարող են գրել և կարդալ, այնպես որ մտածեք տեղեկություններ հավաքելու տարբեր եղանակների մասին:




Ձեր հետազոտական թիմը կարող է քննարկել հարցերն ամեն մասնակցի հետ առանձին և գրանցել անհատի պատասխանները և նկատառումները: Կամ կարող եք մասնակիցներին հավաքել մինչև 10 անձից բաղկացած փոքր խմբերով և հարցեր տալ խմբին՝ քննարկելու և պատասխանները գրանցելու համատեղ: Պատասխանները գրանցելիս կարևոր է գրանցել և մասնակիցների կողմից ընտրված պատասխանը, և ցանկացած մեջբերում, որն առավել շատ մանրամասներ է հաղորդում նրանց պատասխանի վերաբերյալ: Սա կօգնի հասկանալ միտումները տվյալները վերլուծելիս:

Հարցումների իրականացնելիս հետազոտական թիմի անդամները պետք է հարցերը տան մեկ առ մեկ: Հիշե՛ք, հարցման գործընթացը տեղեկությունների փոխանակում է, այնպես որ լսեք ուշադիր, մի՛ ընդհատեք կամ դիտողություն արեք որևէ մեկի պատասխանին և մասնակիցներին բավարար ժամանակ տվեք ամեն հարցին պատասխանելու համար: Երբեմն մարդիկ կարող են հուզվել ցավալի իրադարձություններ հիշելիս: Եղեք աջակցող և համբերատար: Այս խորհուրդները կքաջալերեն մարդկանց բացվել և պատմել իրենց պատմությունը:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

# ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՔՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ



Որպեսզի պաշտպանեք ձեր հետազոտական թիմին և մասնակիցներին, կանոններ սահմանեք, թե ինչպես է կարելի օգտագործել լուսանկարները, տեսագրությունները և մեջբերումները, և թույլտվություն հարցրեք նախքան այս տվյալներն օգտագործելը: Ապահովության վերաբերյալ կարելի է հաշվի առնել նաև հետևյալը.

- Ձեր հետազոտությունն իրականացրեք զգուշությամբ.
  - → Զգայունություն պահանջող վայրերում, եթե դուք ինքներդ այդ գյուղում չեք ապրում, ամեն գիշեր մնացեք մեկ այլ վայրում: Հագեք հագուստ, որը չի տարբերվի համայնքի այլ անդամների հագուստից:
  - → Հարցաշարի տպված օրինակները տանելը կարող է կասկածի տեղիք տալ իշխանությունների կողմից: Հետազոտության իրականացման համար փորձեք տարածված էլեկտրոնային սարքեր օգտագործել, օրինակ՝ բջջային հեռախոսներ: Օրինակ՝ կարող եք լուսանկարել հարցաշարը ձեր հեռախոսով, հարցերը կարդալ այնտեղից, այնուհետև գրանցել պատասխանները գրավոր կամ ձայնագրությամբ:

- Ապահով պահեք ձեր հավաքած տվյալները
  - → Տվյալներ պարունակող բոլոր տպված հարցաշարերը պահեք կողպված վայրում
  - → Եթե մասնակիցն ուզում է կապի մեջ մնալ հետազոտական թիմի հետ, նրանց ինքնության մասին տեղեկություններն առանձին պահեք հարցման պատասխաններից
  - → Համոզվեք, որ ցանկացած թվային տվյալներ հասանելի են միայն ապահով գաղտնաբառերի միջոցով:

# ՍՏԱՑՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԸ ՀԱՍԿԱՆԱԼՆ ՈՒ ՏԱՐԱԾԵԼԸ


Համակարգեք ձեր ստացած տվյալները 56

**Խմբային աշխատանք.** Ո՞վ է անհրաժեշտ համակարգիչ հաշվելու համար 57

**Ուշադրություն.** Համայնքի ներգրավումը ողջ գործընթացում 60

Վերլուծեք ձեր տվյալները 61

Տարածեք հետազոտության արդյունքները 65

**Խմբային աշխատանք.** Ձեզ իրենց տեղը դրեք 66

Միասին, գործե՛ք 70

Համայնքի կողմից առաջնորդվող հետազոտության փորձ. Էլիասի պատմությունը 71

Եվ այսպես, դուք հավաքել և վերապատրաստել եք ձեր հետազոտական թիմին, խոսել համայնքի անդամների հետ և հավաքել ձեր տվյալները: Շնորհավորու՛մ ենք: Այժմ դուք ունեք համայնքի կողմից առաջնորդվողհետազոտության արդյունքները:

Ո՞րն է հաջորդ քայլը

Համայնքի կարծիքներն ու գաղափարները հասկանալը և այնուհետև դրանք ձեր հասցեատերերին փոխանցելը կարող է հաճախ մեծ աշխատանք թվալ: Ելնելով մեր փորձից՝ մենք մի քանի գաղափարներ և առաջարկներ ենք ի մի բերել՝ այս գործընթացում ձեզ ուղղություն տալու համար:

# ՀԱՄԱԿԱՐԳԵՔ ՁԵՐ ՍՏԱՑԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԸ

Հետազոտությունը համակարգելը կօգնի հետազոտական թիմին աջակիցներին և համայնքի անդամներին վերլուծել արդյունքները: Համոզվեք, որ հետազոտության համակարգման նպատակով ձեր ստեղծած համակարգը զգուշորեն պաշտպանում է համայնքի անդամների ինքնությունը:



Այնպիսի ծրագրեր, որոնցից են SurveyMonkey-ն, Google Forms-ը կամ KoBo Toolbox-ը ավտոմատ կերպով վերլուծում են հարցման տվյալները, սակայն համացանցային կապի կարիք ունեն և հնարավոր է, հասանելի չլինեն համայնքի լեզվով:

Որոշները կարող են նաև վարձավճար պահանջել: Եթե այս ծրագրերը հասանելի չեն, միևնույնն է, հետազոտական թիմը կարող է հաշվել և հաստատել տվյալները:

Երբ արդեն ողջ տվյալները համակարգված են, միգուցե ուզենաք հետազոտական թիմի հետ միասին քննության ենթարկել և վերլուծել արդյունքները: Ուշադրություն դարձրեք հիմնական միտումներին և օրինակներին և փորձեք հասկանալ հետազոտական հարցի վերաբերյալ ընդհանուր մտքերը: Տվյալների վերլուծության փորձ ունեցող ձեր աջակիցները կարող են օգտակար լինել այս հարցում:

ԽՄԲԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ.

## ՈՒ՞Մ Է ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀԱՄԱԿԱՐԳԻՉ ՀԱՇՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ

**Նպատակը**

Վերապատրաստել հետազոտական թիմին՝ վերլուծելու հավաքված տվյալները առանց համակարգչային ծրագրի կիրառման:

**Անհրաժեշտ ժամանակը.** 1 - 2 ժամ

**Անհրաժեշտ նյութերը.**

Լրացված հարցման օրինակներ, ֆլիփ չարթի թղթեր, մարկերներ, կպչուն թղթիկներ կամ գունավոր թղթի կտորներ



## ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

1. Պատճենահանեք յուրաքանչյուր հարցում և համարակալեք, եթե դա դեռ չեք արել տվյալների հավաքման ընթացքում: Օրիգինալները պահեք ապահով վայրում՝ մասնակիցներին պաշտպանելու նպատակով:

2. Հավաքեք բոլոր լրացված հարցումների օրինակները և հերթականությամբ համակարգեք դրանք: Կախված նրանից, թե քանի մարդ է ձեզ օգնում վերլուծել արդյունքները, բաժանվեք խմբերի և բաժանեք այս օրինակները խմբերի միջև: Հավաքած տվյալների ստուգությունը վավերացնելու նպատակով վստահ եղեք, որ թիմի անդամները չեն վերանայում իրենց իսկ իրականացրած հարցումը:



3. Պատին ֆլիփ չարթի թուղթ փակցրեք, որպեսզի գրանցեք ամեն հարցին տրված պատասխանների արդյունքները: Ամեն հարցի համար գրեք այդ հարցի համարը և դրա պատասխանի տարբերակները: Կամ, եթե ռեսուրսները բավականացնում են, տպեք հարցման մեջ ներառված ամեն հարցը առանձին թղթի վրա՝ պատասխանները գրանցելու նպատակով:

4. Հարցման մեջ ներառված յուրաքանչյուր հարցի համար խնդրեք ամեն խմբի հաշվել պատասխանների քանակը հարցաշարում տրված ամեն պատասխանի տարբերակի համար: Գրեք այս թվերը ֆլիփ չարթի թղթի վրա՝ համապատասխանող պատասխանի կողքը: Օրինակ՝.

***Ինչպե՞ս կնկարագրեք ինքներդ ձեզ: Նշեք բոլորը, որը համապատասխանում է ձեզ:***

- ☐ Ես պատկանում եմ բնիկ համայնքին *20+10+20=50*
- ☐ Ես էթնիկ կամ կրոնական փոքրամասնաության անդամ եմ *0+10+5=15*
- ☐ Ես ներգաղթյալ եմ այլ շրջանից, նահանգից կամ քաղաքից
- ☐ Ես խտրական վերաբերմունքի արժանացող խմբի կամ խավի անդամ եմ *20+10+8 = 38*

Նշումներ.

5. Այն հարցերի դեպքում, որոնք պատասխանների տարբերակներ չունեն և որպես պատասխան մեկնաբանություններ են պահանջում, տարբեր թեմաները կամ պատասխանների տարբերակները գրեք որպես առանձին պատասխան:

6. Ամեն տարբերակի համար պատասխանների քանակը գրանցելուց հետո խնդրեք ձեր թիմին ուշադիր նայել մեկնաբանություն պահանջող հարցերի հատվածում գրված տարբերակներին: Ընդգծեք նրանք, որոնք սպեցիֆիկ տվյալներ են պարունակում: Սրանք կարող են պարունակել տեղեկություններ առ այն, թե ինչ, ով, ինչպես, երբ են դեպքերը պատահել, խնդրանքներ, առաջարկներ կամ կարծիքներ, որոնք ուղղակիորեն կապված են խնդրի հետ: Գրեք այս մեկնաբանությունները ֆլիփ չարթի թղթի վրա:

7. Հարցաշարի ամեն հարցի համար կրկնեք 3 և 4 քայլերը:

8. Արդյունքները գրանցեք առանձին թղթի վրա: Դուք սա ավելի ուշ կօգտագործեք ձեր վերլուծության մեջ:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

# ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄԸ ՈՂՋ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ



Շատ կարևոր է, որպեսզի հետազոտության ողջ պրոցեսի ընթացքում հետազոտական թիմը պարբերաբար տեղեկություններ հաղորդի և ներգրավի համայնքի ավելի լայն շերտերին, որպեսզի այն համատեղ աշխատանք լինի: Գործընթաց մշակեք՝ համայնքին տեղեկացնելու գործողությունների և այն ամսաթվերի մասին, երբ համայնքը պետք է հավաքվի վերանայման և իր ներդրումն ունենալու համար:

1. Գործընթացի ամենասկզբում համայնքի ավելի լայն շերտերին տեղեկություններ տրամադրեք հետազոտական թիմի պլանների և նպատակների մասին:
2. Երբ հետազոտության գործընթացը պատրաստ է մեկնարկելու, տեղեկացրեք նրանց, թե ինչպես այն պետք է իրականացվի:
3. Վերանայեք նախնական տվյալները համայնքի ավելի լայն շերտերի հետ միասին՝ նախքան վերջնականացնելը կամ արդյունքները հանրայնացնելը:
4. Խնդրեք համայնքին ստուգել և վերլուծել ստացված տվյալները, և առաջնահերթություն տալ այս հետազոտությանը, որն ամենակարևորն է իրենց նպատակների կամ շահերի պաշտպանության արշավի համար:


# ՎԵՐԼՈՒԾԵՔ ՁԵՐ ՍՏԱՑԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԸ

Կան տարբեր եղանակներ հասկանալու, թե ինչ են ասում տվյալները, ասել է թե ինչ է ասում համայնքը: Սկսելու ամենահեշտ եղանակը ամեն հարցը վերանայելն է և հաշվել այն մարդկանց տոկոսը, որոնք ընտրել են տվյալ պատասխանը, ինչպես նաև ցանկացած նմանատիպ գաղափարների կամ մեկնաբանությունների գրանցումը:

### Ինչպե՞ս եք հաշվում տոկոսները

**Տոկոսը** թիվն ամբողջի որևէ մասով արտահայտելու ձևէ: Տոկոսով արտահայտելիս ավելի հեշտ է հասկանալ, թե համայնքի որ մասն է հետազոտական որևէ հարցին պատասխանել նույն կերպ: Օրինակ՝ փոխանակ ասենք 300-ից 240-ը ասել են, որ իրենք չգիտեն, թե ով է ֆինանսավորում ծրագիրը, կարող ենք ասել, որ մարդկանց 80%-ը չգիտի, թե ով է ֆինանսավորում ծրագիրը: Այս թվերը տոկոսների վերածելը ձեր վերլուծության մեջ նաև կօգնի ձեզ ավելի հեշտությամբ վեր հանել միտումները:

Տոկոսները հաշվելու համար մենք ընդունում ենք ամբողջը որպես 100%-ին հավասար: Օրինակ՝ եթե ձեր հետազոտությանը մասնակցել են 300 հոգի, մասնակցածների 100%-ը կլինեն բոլոր 300 հոգին: Ըստ այս սցենարի, եթե 150 հոգին «այո» են պատասխանել որևէ հարցի, ապա դուք ունեք 300-ից 150-ը: Սա տոկոսի վերածելու համար 150-ը բաժանեք 300-ի: Երբ սա հաշվեք, կեսնեք, որ ամբողջի 0.5-ը կամ 50%-ն ասել են այո, իսկ 50%-ը այլ պատասխան են տվել:



Կարող է հարցեր լինեն, որոնք վերաբերում են միայն որոշակի մասնակիցներին և ոչ ամբողջ խմբին: Նման իրավիճակներում պատասխանը բաժանեք այն մարդկանց ընդհանուր քանակին, որոնք պատասխանել են հարցին: Կիրառելով այս մեթոդը՝ ձեր պատասխանը ներկայացուցչական կլինի հարցին պատասխանողների համար:

Դուք կարող եք փորձ ձեռք բերել՝ հետևյալ սցենարում տոկոսները հաշվելով.

Դուք հավաքել եք 200 հարցաթերթ: Ստորև ներակայացված են «Ծրագրի արդյունքում փոխվե՞լ է ձեր կյանքի որակը» հարցի վերաբերյալ ստացված պատասխանները: Հաշվեք և գրանցեք ամեն պատասխանն ընտրած մասնակիցների տոկոսը:

Դուք կարող եք փորձ ձեռք բերել՝ հետևյալ սցենարում տոկոսները հաշվելով.

Դուք հավաքել եք 200 հարցաթերթ: Ստորև ներակայացված են **«Ծրագրի արդյունքում փոխվե՞լ է ձեր կյանքի որակը»** հարցի վերաբերյալ ստացված պատասխանները: Հաշվեք և գրանցեք ամեն պատասխանն ընտրած մասնակիցների տոկոսը

| Պատասխան | Այս պատասխանն ընտրած մարդկանց քանակը | Տոկո՞ս (%) |
|---|---|---|
| 1) Իմ կյանքի որակը բարելավվել է | 40 անձ | |
| 2) Իմ կյանքի որակն ավելի է վատացել. | 135 անձ | |
| 3) Իմ կյանքի որակը մնացել է անփոփոխ | 25 անձ | |

**Պատասխաններ**



1) 20%
2) 67.5%
3) 12.5%

Այժմ, երբ գիտեք, թե ինչպես հաշվել տոկոսը, ահա մի քանի տարբերակ, թե ինչպես կիրառել դա ձեր տվյալները հասկանալու համար.

- *Ինչպե՞ս են համայնքի անդամները պատասխանել ամեն հարցին*

  Կարող եք սկսել՝ դիտարկելով ամեն հարցին համայնքի անդամների կողմից տրված տարբեր պատասխանները: Հաշվարկեք այն մարդկանց տոկոսը, որոնք նույն կերպ են պատասխանել: Ի՞նչ են նրանց պատասխանները ձեզ հուշում: Ի՞նչ են նրանք կարծում հարցի մասին: Ելնելով նրանց պատասխաններից՝ ինչպե՞ս է այս հարցը տեղավորվում ծրագրի կամ հետազոտական թեմայի վերաբերյալ համայնքի ընդհանուր կարծիքի մեջ:

- *Դիտարկելով բոլոր պատասխանները՝ ըստ ձեզ կա՞ն ավելի լայն ընդհանուր միտումներ*

Դուք պատասխանների մեջ տեսնու՞մ եք ընդհանուր թեմաներ: Փորձեք դուրս գրել դրանք նախադասությունների տեսքով: Օրինակ՝



*Դուք պատասխանների մեջ տեսնու՞մ եք ընդհանուր թեմաներ: Փորձեք դուրս գրել դրանք նախադասությունների տեսքով: Օրինակ՝*

- Պատասխանողների 49%-ը համաձայն էին ծրագրի հետ ըստ պլանավորածի, մինչդեռ մյուս մասնակիցները ցանկանում էին ծրագրի հետ կապված փոփոխություններ առաջարկել կամ դադարեցնել այն: Նրանք, ովքեր համաձայն չէին, կարծում էին, որ այլ տարբերակ

չունեն, քան դուրս գալ իրենց հողերից, քանի որ ոչ մի այլընտրանք չէր առաջարկվում:

- Համայնքի անդամների մեծ մասը տեղյակ չէին վերաբնակեցման գործընթացից և չէին տեղեկացվել իրենց իրավունքների մասին:

Ըստ ձեզ, այն նախադասությունները, որոնք դուք դուրս եք գրել, արտացոլու՞մ են այն, ինչ ասում է համայնքը:

- *Որո՞նք են այն ստացված տվյալները, որոնք դուք կարծում եք կարևոր են ձեր հետազոտական նպատակների համար:*

Հետազոտական թիմի հետ միասին պարզեք, թե որոնք են ձեր ստացած կարևոր տվյալները: Օրինակ՝ համայնքում ընդհանուր հարցվածներից

- 90% -ին կառավարության որևէ օղակ չի հարցրել իրենց համայնքի զարգացման առաջնահերթությունների մասին,
- 62.35% -ը կարծում է, որ ծրագրում ներառված ներդրողներն օգուտ կստանան այս ծրագրից,
- 6.87%-ը կարծում է, որ իրենք օգուտ կստանան ծրագրից:

Բացի տոկոսներից և թվային տվյալներից, ուշադրություն դարձրեք մարդկանց պատմությունների և մեկնաբանությունների վրա: Օրինակ՝ միգուցե նկատեք, որ այն համայնքում, որտեղ մարդկանց ուժով վտարել են, շատերը ֆիզիկական բռնության ենթարկված լինելու պատմություններ են պատմել: Մեջբերումներ անելով անհատական պատմություններ պատմելը բացահայտում է թվերի հետևում գտնվող մարդկանց և կարող է հետազոտությունն ավելի համոզիչ և անձնական դարձնել: Թեև դուք պետք է միշտ պաշտպանեք հետազոտության մասնակիցների մասին տեղեկությունները, որոշները կարող է ուզենան, որ իրենց պատմությունները հանրայնացվեն: Հիշեք նրանցից թույլտվություն ստանալու մասին՝ նախքան իրենց պատմությունը հանրայնացնելը:

Ձեր հավաքած տվյալները վերլուծելուց հետո գնացեք համայնքի մոտ և տեղեկացրեք նրանց հետազոտական թիմի ստացած տվյալների մասին: Ստեղծեք հետազոտության միջոցով ստացված տվյալների մասին առաջին սևագիր տարբերակը (և միգուցե երկրորդը կամ երրորդը) և տրամադրեք այն համայնքին: Ստացեք նրանց կարծիքը և հարցրեք, թե հետազոտության վեր հանած խնդիրներից որն է առաջնահերթ իրենց համար: Հարցրեք նրանց. *«Սա այն է, ինչ դուք կարծու՞մ եք: Սա ձեր հետազոտությունն է: Այս վերլուծությունն արտահայտու՞մ է ձեր գաղափարների, կարծիքների և առաջնահերթությունների ճշմարտացիությունը»:* Կարող է արդյունքների ներկայացման տարբեր ֆորմատների կարիք լինի: Օրինակ՝ եթե հետազոտության վերջնական պրոդուկտը հաշվետվությունն է, իսկ համայնքում բոլորը չէ, որ կարդալ գիտեն, կարելի է լուսանկարներով պրեզետացիա պատրաստել՝ հաշվետվության մեջ ներառված հիմնական գաղափարները հաղորդելու համար:



Եթե անվտանգ է, կարող եք նաև կարծիք խնդրել այն աջակիցներից, ազդեցություն ունեցողներից և որոշում կայացնողներից, որոնց դիմել եք հետազոտության սկզբում: Եթե օգտակար կլինի, նախապես հանդիպման օր նշանակեք և խնդրեք նրանց վերանայել հետազոտությունը և նախնական առաջարկները՝ նախքան դրանք հանրայնացնելը: Սակայն նրանց արձագանքը չպետք է փոխի այն առաջնահերթությունները, որոնք համայնքներն են առաջարկել:

Երբ համայնքն արդեն ստուգել է արդյունքները և արել իր բոլոր ներդրումները, վերջնականացրեք հետազոտությունն ու առաջարկները: Այժմ ժամանակն է տարածել հետազոտության արդյունքները:

# ՏԱՐԱԾԵՔ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Երբ արդեն համայնքը որոշել է, որ հետազոտության արդյունքում ստացած տվյալները ճշմարիտ կերպով ներկայացնում են իրենց կարծիքը, ժամանակն է ուղերձը հաղորդել հասցեատերերին: Նորից մտածեք, թե ովքեր են հետազոտության հասցեատերերը: Հարցրեք ինքներդ ձեզ. ո՞վ պետք է լսի համայնքի ձայնը՝ խնդրին լուծում տալու համար: Ո՞րն է հետազոտության արդյունքները նրանց հաղորդելու լավագույն տարբերակը, որպեսզի կարողանան համապատասխան քայլեր ձեռնարկեն:

ԽՄԲԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ.

# ՁԵԶ ԻՐԵՆՑ ՏԵՂԸ ԴՐԵՔ

**Նպատակը**

Պարզել ձեր հետազոտության հիմնական հասցեատերերին և հասկանալ նրանց դիրքորոշումն ու հետաքրքրությունները:

**Անհրաժեշտ ժամանակը.** 45 րոպեից մինչև 1 ժամ

**Անհրաժեշտ նյութերը.**

ստվարաթղթե փոքր քարտեր, մարկերներ, կպչուն ժապավեն

## ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

1. Մեկտեղ հավաքեք ձեր հետազոտական թիմի բոլոր անդամներին: Նորից դիտարկեք աջակիցների և ազդեցություն ունեցողների քարտեզը, որը գծել և պահել էիք նախորդ խմբային աշխատանքներից:
2. Գրեք ձեր կողմից նախորոք որոշած ազդեցություն գործողներից յուրաքանչյուրի անունը փոքր ստվարաթղթի կամ այլ թղթի վրա: Խնդրեք ձեր թիմին շրջան կազմել: Դրեք ստվարաթղթե քարտերը շրջանի կենտրոնում և թիմի ամեն անդամի խնդրեք վերցնել մեկ քարտ և վերադառնալ շրջան:
3. Խնդրեք յուրաքանչյուրին նայել իրենց քարտին և ձևանալ, որ իրենք հենց այդ մարդն են: Խնդրեք բոլորին սկսել շրջանով դանդաղ քայլել ժամացույցի սլաքի ուղղությամբ: Քայլելիս բոլորին խնդրեք մի քանի հարց մտածել՝ իրենց դնելով այդ անձի տեղը.

   *a. Առավոտյան ո՞ր ժամին քնից կարթնանայիք*
   *b. Սովորաբար ի՞նչ եք անում առավոտյան ժամը 10-ին*
   *c. Ի՞նչ եք ուտում ճաշի ժամին*
   *d. Ի՞նչ տեսակի մարդկանց եք հանդիպում ամեն օր*

Այնուհետև, խնդրեք ձեր թիմի անդամներին պատկերացնել, թե ինչպես կարող են այդ անձիք քայլել և թող սկսեն քայլել նրանց նման: Շարունակեք հարցեր տալ, որպեսզի թիմի անդամները  բացահայտեն, թե որոնք են այդ անձանց հետաքրքրությունները և ձեր հետազոտության թեմայի որ ասպեկտները կարող են իրենց հետաքրքրել:



4. Խնդրեք բոլորին դադարել քայլել և հարցրեք, թե ինչու այդ անձը պիտի այս աջակցի ձեր նպատակին:  Այնուհետև խնդրեք թիմի ամեն անդամի բարձրաձայն ասել իրենց պատկերացրած պատասխանը. «Ես կաջակցեմ այս համայնքին, քանի որ. . .»:

5. Խնդրեք ձեր թիմին գուշակել, թե ամեն մեկն իրեն ում տեղն է պատկերացրել, և երբ որ բացահայտեք, պատին փակցրեք տվյալ ազդեցություն գործողի անունով քարտը:

**Ամփոփում.** Թիմը կարող է բավարար տեղեկություններ չունենալ՝ հասկանալու ազդեցություն գործողներից ամեն մեկին: Լավ կլինի իմանալ, թե որտեղ են բացերը: Միասին թիմը կարող է դիտարկել ձեր աջակիցներին ՝ տեսնելու, թե ով կարող է օգնել ձեզ հասկանալ տարբեր ազդեցություն գործողների հետաքրքրությունները, դիրքորոշումները և նպատակին աջակցելու նրանց կարողությունները:

Ձեր հետազոտության արդյունքները տարածելու բազմաթիվ տարբերակներ կան: Միգուցե որոշեք, որ ձեր համայնքն ուզում է հարցազրույց տալ հեռուստացույցով, որպեսզի ամբողջ երկիրը կարողանա լսել ձեր փորձառության և գաղափարների մասին: Կամ միգուցե ուզենաք առանձին խոսել պետական պաշտոնյաների հետ և նրանց հաղորդել ձեր առաջարկները: Կամ էլ երկուսը միասին: Եթե հետազոտության հասցեատերերը գտնվում են ձեր համայնքից կամ երկրից դուրս, նրանց հետ կապեր ունեցող ձեր աջակիցները կարող են խորհուրդներ տալ և օգնել ձեզ կապվել նրանց հետ:

Մտածեք, թե ինչպես պիտի ձեր հետազոտական թիմն ու համայնքն իրազեկեն հետազոտության արդյունքների և առաջարկությունների մասին: Արդյո՞ք գրավոր հաշվետվությունը լավագույն տարբերակն է: Եթե այո, ի՞նչ երկարության պիտի այն լինի, և ի՞նչը պիտի համոզի հասցեատերերին կարդալ այն: Պետք է արդյո՞ք պրեզենտացիա անեք, կամ ստեղծեք բողոքի պաստառներ, տեսագրություն, ինֆոգրաֆիկա կամ ինտերնետային էջ: Աջակիցները կարող են օգնել ձեզ անկախ նրանից՝ կամավոր վիդեո խմբագրող է պետք, գրաֆիկայի դիզայներ թե նկարիչ: Դրսևորե՛ք առավել ռազմավարական և ստեղծագործ մտածողություն:

Ահա մի քանի օրինակ, թե ինչպես կարելի է իրազեկել ձեր հետազոտության մասին.

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԳՐԵՔ



Օրինակների համար տեսե՛ք սույն հղումները

- *http://bit.ly/LilongweWaterProjectCommunityOutreachReport*
- *http://bit.ly/IAP_GAT*

## ՊԱՏԿԵՐԱՎՈՐ ՆԵՐԿԱՅԱՑՐԵՔ ՍՏԱՑՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԸ



Սա կարելի է նկարել ձեռքով կամ ստեղծել առցանց: Անվճար թվային ինֆոգրաֆիկայի ձևանմուշներ կարելի է գտնել ստորև.

- *www.canva.com*

Համայնքի կողմից առաջնորդվողհետազոտության վերաբերյալ ինֆոգրաֆիկայի օրինակներ կարելի է գտնել այստեղ

- *http://bit.ly/8StepstoCommunityLedDevelopment*
- *http://bit.ly/MalawiCommunityInfographic*
- *http://bit.ly/PanamaCommunityInfographic*

## ԿԻՐԱՌԵՔ ԱՐՎԵՍՏԻ ՈՐՈՇ ՄԻՋՈՑՆԵՐ



Սա կարող է լինել թատրոնի, պարի, գրաֆիտիի, լուսանկարչության, նկարչության, քանդակագործության, կամ այլ արտահայտչաձևի միջոցով

## ԿԱԶՄԱԿԵՐՊԵՔ ԿՈԼԵԿՏԻՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ



Սա կարող է ներառել ձեր համայնքը կամ դրանից դուրս գտնվող անձանց և կարող է լինել բողոքի ակցիա, քայլերթ կամ խմբային գործողության մեկ այլ ձև

## ԿԱԶՄԱԿԵՐՊԵՔ ԿՈԼԵԿՏԻՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ



Կիրառեք հեշթեգ (#) կամ at (@) նշանը՝ ուղղված որոշակի հաշիվների: Սոցիալական մեդիայի միջոցով ակտիվ գործունեության վերաբերյալ հավելյալ տեղեկությունների համար անցեք այս հղմամբ.

- *http://bit.ly/SocialMediaStrategiesforAdvocacy*

## ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՐԵՔ



Կարող եք միջոցառումների իրականացնել՝ ձեր ստացած տվյալները ներկայացնելու, ինչպես նաև վերը քննարկված այլ կրեատիվ գործողության նպաստելու համար:

Որ միջոցն էլ ընտրեք համայնքի կողմից ստացած տվյալները ներկայացնելու համար, կարևոր է, որպեսզի համայնքը ներգրավված լինի ողջ գործընթացում: Եթե հետազոտության գործընթացը հանդիսանում է համայնքի կողմից առաջնորդվող ավելի լայն արշավի մաս, ապա **արդյունքները ճիշտ մարդկանց ճիշտ կերպով ներկայացնելը** կարող է էական նշանակություն ունենալ:

Երբ ջատագովության միջոցառումը սկսվի, խնդրեք ձեր հետազոտական թիմին խորհել, թե ինչ են զգում ողջ գործընթացի վերաբերյալ: Գնահատեք, թե ձեր նպատակներին հասնելու ճանապարհի որ կետում եք գտնվում, քննարկեք մարտահրավերները և մտածեք, թե ինչ համապատասխանեցումներ անել արշավի հաջորդ քայլերի

ընթացքում: Սա կարող է **դառնալ հիշարժան և ուսուցողական գործընթաց** և անհատների, և համայնքի ավելի լայն շերտերի համար: Մտորումներ կարող են լինել նաև հետազոտության ողջ գործընթացի ընթացքում:

# ՄԻԱՍԻՆ, ԳՈՐԾԵ՛Ք

Հետազոտությունն ու առաջարկները ներկայացնելը կարևոր քայլ կարող է լինել փոփոխություններ պահանջելու, ինչպես նաև այլ կողմերին մոբիլիզացնելու և համայնքի զարգացման պլանների և գաղափարների մասին նրանց տեղեկացնելու համար: Հետևեք հետազոտության սկզբում սահմանած ժամանակի գրաֆիկին, կանոնավոր կերպով վերանայեք ամեն քայլը և համապատասխանեցրեք մոտեցումները՝ հաղթանակներից և նոր հնարավորություններից օգտվելու համար:

Այլ համայնքները, սոցիալական շարժումները կամ քաքաքացիական հասարակության խմբերը կարող են օգտվել ձեր հետազոտությունից և առաջարկներից և միգուցե ուզեն հասկանալ, թե համայնքն ինչպես է իրականացրել հետազոտությունը: Կարող եք պատմել նրանց ձեր աշխատանքի մասին:

## ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋՆՈՐԴՎՈՂ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ.

# ԷԼԻԱՍԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ



Ողջույն, ես Էլիասն եմ: Ես աշխատում եմ մի կազմակերպությանում, որն օգնում է Մալավիի համայնքներին բարձրաձայնել իրենց գաղափարները, որպեսզի համայնքներն իրենց համար կարևոր զարգացման գործնթացների մաս կազմեն:

2016թ. մենք պարզեցինք, որ Մալավիի կառավարությունը ցանկանում է ամբարտակ կառուցել Դիամպվե գետի վրա: Ծրագիրն անմիջական ազդեցություն կունենար ավելի, քան 6,000 մարդու տների, ապրուստի միջոցների և շրջակա միջավայրի վրա: Այդ ժամանակ բավարար տեղեկություններ չկային առ այն, թե մարդիկ ինչ գիտեին ծրագրի և դրա ազդեցության մասին: Սա հասկանալու համար իմ կազմակերպությունը համագործակցեց ՄՀԾ-ի հետ՝ համայնքի կողմից առաջնորդվող հետազոտություն նախաձեռնելու նպատակով: Երեք շաբաթվա ընթացքում մենք հարցում անցկացրեցինք 129 անձի շրջանում, վարեցինք ֆոկուս-խմբային քննարկումներ և հանդիպումներ ունեցանք՝ տեղեկություններ հաղորդելու ավելի քան 700 մարդու, որոնց վրա ծրագիրը պիտի ազդեր: Մենք ուզում էինք այս հետազոտությունից ստացված տվյալներն օգտագործել և աջակցել համայնքներին իրենց մտահոգությունները հայտնել ծրագիրը պլանավորողներին և ֆինանսավորողներին:

Մեր հետազոտությունը սկսելու համար մենք սկզբում հետազոտական թիմեր հիմնեցինք ծրագրի ազդեցությունից տուժող

Էլիաս Ջիկան աշխատել է Քաղաքացիներ Հանուն Արդարության (ՔՀԱ) հետ՝ իրականացնելու համայնքի կողմից վարվող հետազոտություն այն համայնքներում, որոնք կտուժեին Մալավիում Դիամպվե գետի վրա կառուցվող ամբարտակի ծրագրից: Դուք կարող եք կարդալ այդ հետազոտության արդյունքները հետևյալ հղումով *bit.ly/LWPReport*

և տեսնել նրանց ինֆոգրաֆիկան անգլերեն լեզվով այստեղ bit.ly/MalawiInfographic_EN, իսկ Չիչեվա լեզվով՝ այստեղ *bit.ly/MalawiInfographic_CH:*

Էլիասի հետազոտության մեջ կիրառված հարցաշարն ադապտացվել և ստեղծվել է ՄՀԾ-ի Ջատագովության գլոբալ թիմի կողմից: Այս թիմի նախաձեռնությունը միավորում է զարգացման ծրագրերի հետ առնչվելու անմիջական

ամեն համայնքում: Ամեն թիմ բաղկացած էր 5-7 անձից, ներառյալ համայնքի և իմ կազմակերպության անդամները: Մենք այնպես արեցինք, որ ամեն թիմում լինի առնվազն մեկ կին համայնքի անդամ, որպեսզի համայնքի կանայք իրենց հարմարավետ զգային կարծիք արտահայտել:

ՄՀԾ-ի հարցաշարի ձևանմուշը Մալավիի համատեքստին համապատասխանեցնելուց հետո մենք հանդիպումներ կազմակերպեցինք և հարցազրույց վերցրեցինք մարդկանց որոշակի ընտրանքից: Այնպես արեցինք, որ համայնքի ղեկավարները ներգրավվեն ողջ գործընթացում, և նրանք օգնեցին մեզ հասկանալ համայնքի գրաֆիկը: Օրինակ՝ նրանք մեզ ասացին, որ բերքի աճման շրջանում մարդիկ շատ զբաղված էին և շատ ժամանակ չէին ունենա խոսելու: Հանդիպումները սովորաբար տեղի էին ունենում ֆուտբոլի դաշտում, դպրոցներում կամ եկեղեցիներում: Մենք սկզբում խոսում էինք ողջ համայնքի հետ, այնուհետև բաժանվում ավելի փոքր խմբերի և իրականացնում անհատական հարցազրույցներ: Մենք ակտիվորեն խրախուսում էինք կանանց, ծերերի և այլ թերներկայացված խմբերի մասնակցությունը: Հանդիպումների ժամանակ տղամարդկանց քանակը հաճախ գերազանցում էր կանանց քանակին, սակայն մենք մեկ-առ-մեկ հարցումներ էլ էինք կիրառում, որ հավասար քանակի կանայք և տղամարդիկ մասնակցեն:

Մենք հավաքեցինք և վերլուծեցինք բոլորի պատասխանները և մեր ստացած տվյալներն ամփոփեցինք հաշվետվությամբ: ՄՀԾ-ի օգնությամբ կարողացանք ներկայացնել մեր ստացած տվյալները երեք զարգացման բանկի, որոնք մտածում էին ամբարտակը ֆինանսավորելու մասին: Նաև կապ հաստատեցինք Մալավիի կառավարության փորձ ունեցող համայնքային կազմակերպիչներին՝ վարելու համայնքի կողմից իրականացվող հետազոտություն և մոբիլիզացնելու իրենց համայնքներին՝ փոխել զարգացման ընկալման և իրականացման ձևը: Կարդացեք նրանց հաշվետվությունն այստեղ. *bit.ly/backtodevelopment*: Հարցաշարի ձևանմուշը կարող եք գտնել հավելվածում:




Մալավի

> Մենք մեկ-առ-մեկ հարցումներ էինք կիրառում, որ հավասար քանակի կանայք եւ տղամարդիկ մասնակցեն:

> Ես հիացա տեսնելով, թե ինչպես էին համայնքները իրադարձությունները վերցնում իրենց ձեռքը:

հետ և նրանց տեղեկացրեցինք հետազոտությունից ստացած տվյալների մասին: Համայնքի անդամներին ճնշումներից պաշտպանելու համար մենք չներառեցինք տեղեկություններ այն մարդկանց մասին, ովքեր մասնակցել էին հետազոտությանը կամ թե որ համայնքներից էին նրանք:



Հետևաբար, բոլոր երեք բանկերն էլ մեկը մյուսի հետևից որոշեցին, որ փող չեն տա այդ ծրագրի համար: Թեև այլ բանկեր և ընկերություններ կարող էին ապագայում ֆինանսավորել ամբարտակի ծրագիրը, գոնե առայժմ համայնքների ձայնը լսվեց և հարգանքի արժանացավ:

Հետազոտական ողջ գործընթացի ժամանակ հիացա տեսնելով, թե ինչպես էին համայնքները իրադարձությունները վերցնում իրենց ձեռքը և գործում իրենց իսկ

համար: Նրանք նստում էին միասին և համատեղ որոշումներ էին կայացնում իրենց հաջորդ քայլերի մասին: Իրենց արշավի հաջողության շնորհիվ մարդիկ վերականգնում են իրենց իշխանությունը՝ սեփական զարգացումը կերտելու համար:



## Հարցեր քննարկման համար.

1. Ինչպե՞ս Էլիասն ու իր թիմը կարողացան այնպես անել, որ հետազոտությունը ներառի համայնքի բոլոր տեսակետները:
2. Ովքե՞ր էին համայնքի կողմից առաջնորդվողայս հետազոտության հասցեատերերը և որոնք էին նրանց դերերը ծրագրում:
3. Ինչպե՞ս հետազոտությունն ազդեց ծրագրի վրա:

# ՕԳՏԱԿԱՐ ՆՅՈՒԹԵՐ ՀԵՏԱՔՈՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Շնորհավորում ենք, դուք ավարտեցիք ՄՀԾ-ի Համայնքային գործողության ուղեցույցը համայնքի կողմից առաջնորդվող հետազոտության վերաբերյալ: Հուսով ենք՝ պատրաստ եք սկսել ձեր սեփական հետազոտությունը, որը կիրականացնի համայնքը: Որպեսզի օգնենք ձեզ սկսել, մենք մի քանի ռեսուրս ենք ներառել.

1. **Համայնքի կողմից առաջնորդվողհետազոտության ստուգացանկ**

   Այս ռեսուրսը նշում է այն բոլոր քայլերը, որոնց մենք անդրադարձանք սույն Ուղեցույցի մեջ: Դուք կարող եք առանձնացնել այս ստուգացանկը, պատճենահանել և կիրառել այն որպես համայնքի կողմից առաջնորդվողհետազոտության բոլոր քայլերի հիշեցում:

2. **Համայնքի կողմից առաջնորդվողհետազոտության հարցման ձևանմուշ**

   Կիրառեք այս հարցաշարը՝ տեղեկություններ հավաքելու ձեր հետազոտության համար: Ազատ զգացեք ադապտացնելու այն ըստ ձեր համայնքի համատեքստի, կամ էլ սրա հիման վրա ստեղծեք ձերը:

**ՄՀԾ-ն իր երախտագիտությունն է հայտնում հետևյալ մարդկանց և կազմակերպություններին սույն Ուղեցույցում իրենց ունեցած ներդրման համար.**

Մելա Չիպոնդա, WoMin

Սուխգերել Դուգերսուրեն, OT Watch

Էլիաս Ջիկա, Միջազգային հաշվետվողականության ծրագիր

INTERNATIONAL
ACCOUNTABILITYPROJECT

accountabilityproject.org